

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

**ՄՈՍԿՎԱՅԻ 1921 Թ. ՄԱՐՏԻ 16-Ի (18-Ի)
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ***

Բանալի բառեր – 1921 թ. Մոսկվայի պայմանագիր, Սևրի պայմանագիր, Վ. Լենին, Թուրքիա, Հայաստան, պատերազմ, Մուստաֆա Բենալ, «Ազգային ուխտ», Գ. Չիչերին, Բ. Լեգրան, խորհրդաժողով, կեղծիք, տարածք, Սուրմալու, Նախիջևան, 100-ամյակ, դիվանագիտություն, քաղաքականություն, էստոպել:

Մուտք

Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (իրականում՝ մարտի 18-ի) ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրի 100-ամյակի առթիվ լույս տեսնող սույն հոդվածի նպատակն է արդի իրողությունների լույսի տակ ընթերցողին ներկայացնել հայ հասարակությանն այսօր էլ հուզող հետևյալ հարցերը՝

- 1. Մոսկվայի պայմանագրի նախապատմությունը:**
- 2. 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. Արցախյան պատերազմների համեմատությունը:**
- 3. Մոսկվայի 2-րդ խորհրդաժողովի դիվանագիտական նախապատրաստումը:**
- 4. Հայաստանի պատվիրակության՝ խորհրդաժողովին մասնակցության հարցը:**
- 5. Մոսկվայի արձագանքը Հայաստանի «Տեղեկատու զեկուցագրին»:**
- 6. Մոսկվայի պայմանագրի բնույթը:**
- 7. Սուրմալուի գավառի ճակատագիրը:**
- 8. Նախիջևանի հարցը:**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25. 01.2020:

9. Պայմանագրի կնքման ստույգ օրվա կեղծումը:

10. Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի հայ-թուրքական և Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրերի համեմատությունը:

11. Մոսկվայի պայմանագրի ամփոփիչ տվյալները:

12. Մոսկվայի պայմանագրի վավերականության հարցը և արդիականությունը:

1. Մոսկվայի պայմանագրի նախապատմությունը

Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերի 30-ին հունական Լեմնոս կղզու Մուդրոս ծովախորշում Օսմանյան կայսրությունն Անտանտի տերությունների հետ ստորագրեց կապիտուլյացիայի նմանվող զինադադար, որի կետերից մեկով թուրքական զորքերը պետք է հետ քաշվեին մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը:

Սակայն Թուրքիայի պարտությունը և տարածքային կորուստների վտանգը շուտով առաջ բերեցին ազգայնական (միլլի) շարժումը, որը գլխավորեց թուրք գեներալ Մուստաֆա Քեմալը: Քեմալական շարժման նպատակը՝ Թուրքիայի ամբողջականության վերականգնումը, կարող էր իրականանալ «հայկական սեպը» վերացնելով: Այդ խնդրին էին նվիրված թուրք ազգայնականների 1919 թ. հուլիս-օգոստոսին **Էրզրումում**, իսկ սեպտեմբերին **Սվազում** գումարված համաժողովները: Այդ համաժողովների դրույթները տեղ գտան Մտամբուլի սուլթանական (օսմանյան) խորհրդարանի 1920 թ. **հունվարի 28-ին** ընդունած «**Ազգային ուլխս**» (**Misak-ı Milli**) կոչված ծրագրային փաստաթղթում՝ բաղկացած նախաբանից և 6 կետից, որում արձանագրվում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը՝ Հայկական հարցի բացառման սկզբունքով: Թուրքական տարածք էր հռչակվում նաև նախկինում Ռուսական կայսրության կազմում գտնվող, իսկ այդ ժամանակ ՀՀ-ին պատկանող Կարսի մարզը մինչև Արփաչայ (Ախուրյան) և Երասխ (Արաքս) գետերը¹:

Դրանից հետո՝ 1920 թ. գարնանը, Անգլիայի առաջարկությամբ դաշնակիցները (Անտանտի երկրները) ռազմակալում են Ստամբուլը և մարտի 16-ին արձակում են Օսմանյան խորհրդարանը: Իսկ Անտանտի դեմ դուրս եկած քեմալականները փախչում են Անատոլիա և մայրաքաղաք են դարձնում Անգորան (Անկարան): Իրենց նպատակներն իրագործելու համար ազգայնականներն Անգորայում ձևավորում են սուլթանական կառավարությունից անկախ իշխանություն: 1920 թ. ապրիլի 23-ին Անգորայում բացվում է միլլիների Ազգային մեծ ժողովը՝ խորհրդարանը, և կազմվում է կառավարությ-

1 Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ, Եր., 2019, էջ 60-61:

յուն՝ Մ. Քենալ փաշայի գլխավորությամբ: Դրանով ստեղծվում է յուրօրինակ **երկիշխանություն**. մեկը մայրաքաղաք Ստամբուլում սուլթան Մեհմեդ VI-ին ենթակա միջազգայնորեն ճանաչված կառավարությունն էր, որի իշխանությունը գործնականում սահմանափակվում էր մայրաքաղաքով, իսկ մյուսը՝ միջազգայնորեն չճանաչված, խռովարար միլիիների՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը՝ Մուստաֆա Քենալ փաշայի գլխավորությամբ:

1920 թ. ապրիլի վերջերից՝ Քենալ-Լենին նամակագրությունից հետո, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Վ. Լենինի գլխավորությամբ, փաստորեն, առաջինը ճանաչեց Մ. Քենալի գլխավորած ԹԱՄԺ կառավարությունը²: Արդեն ապրիլի 26-ին Վ. Լենինին հասցեագրած պատասխան նամակում Մ. Քենալը «ինպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի» համար Խորհրդային Ռուսաստանից օգնություն էր խնդրում 5 մլն թուրքական լիրա ոսկով, ինչպես նաև զենք, զինամթերք, որոշ ռազմատեխնիկա ու պարենամթերք³:

Միաժամանակ թուրք ազգայնականները բոլշևիկներին իրենց կողմը գրավելու նպատակով կեղծավորաբար իրենց հայտարարեցին հեղափոխականներ ու սոցիալիստներ, որոնք իբր նպատակ ունեն Թուրքիայում և առհասարակ մուսուլմանական Արևելքում տարածելու հեղափոխության կրակը, հաստատելու սոցիալիզմ ու նույնիսկ կոմունիզմ: Իսկ Վ. Լենինի գլխավորած բոլշևիկների կառավարությունը, կուլ տալով այդ քարոզչական խայծը, դարձավ քենալականների բարեկամն ու դաշնակիցը:

Խորհրդային-քենալական մերձեցումն իր սուր ծայրով ուղղվեց նորաստեղծ ՀՀ ու հայ ժողովրդի կենսական շահերի դեմ: Քաղաքացիական կռիվներով Այսրկովկաս մուտք գործած Կարմիր բանակը 1920 թ. ապրիլի 28-ին, առանց որևէ կրակոցի, խորհրդայնացրել էր Ադրբեջանը ու հայտնվել Հայաստանի սահմաններին, ինչի պատճառով Հայաստանում բռնկվել էր բոլշևիկների Մայիսյան հակապետական խռովությունը: Խորհրդա-քենալական մերձեցման վտանգից անհանգստացած՝ Հայաստանի կառավարությունը 1920 թ. ապրիլի վերջին խորհրդարանի փոխխոսնակ Լ. Շանթի գլխավորությամբ պատվիրակություն գործուղեց Մոսկվա՝ բանակցելու Խորհրդային Ռուսաստանի հետ հայ-ռուսական հարաբերությունները կարգավորելու ու բարեկամության պայմանագիր կնքելու նպատակով: Բայց մայիսի վերջից սկսված երկամսյա (Լ. Շանթ-Գ. Չիչերին) բանակցությունները գործնական որևէ արդյունք չունեցան: Կողմերը չկարողացան համաձայնության գալ ոչ միայն արևմտահայ նահանգների, այլև Արցախի, Սյունիքի ու Նախիջևանի

2 Տե՛ս «Документы внешней политики СССР», (այսուհետ՝ ДВП СССР), հատ. 2, Մ., 1958, էջ 554-555, 725-726.

3 Տե՛ս «Международная жизнь», Մ., 1963, N 11, էջ 148:

կարգավիճակի առնչությամբ: Ուստի հայ-ռուսական բանակցություններն ընդհատվեցին Երևանում շարունակելու մտադրությամբ:

Դրան հակառակ՝ ամռան երկրորդ կեսին՝ հուլիս-օգոստոսին, դարձյալ Մոսկվայում գումարվեց ռուս-թուրքական (բուլշևիկա-քեմալական) 1-ին խորհրդաժողովը (պատվիրակությունների ղեկավարներ՝ Գ. Չիչերին, Բ. Սամի բեյ): Այստեղ բանակցություններն արդյունավետ եղան, Ռուսաստանի և Թուրքիայի միջև կազմվեց պայմանագրի նախագիծ և 1920 թ. **օգոստոսի 24-ին**՝ նախաստորագրվեց: Դրանով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը սկզբունքորեն ձանաչեց թուրք ազգայնականների 1920 թ. հունվարի 28-ին ընդունած «Ազգային ուխտ»-ը⁴: Ութ հոդվածից բաղկացած ռուս-թուրքական պայմանագրի այս նախագիծն իր սուր ծայրով ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ. նախագծի հենց 1-ին հոդվածն ամրագրում էր, որ «Ստորագրող կողմերը պայմանավորվում են չձանաչել հաշտության ոչ մի պայմանագիր կամ միջազգային ակտ, որն ուժով է պարտադրվել: Ըստ այդմ ՌՍԴԽԸ-ն պարտավորվում էր ոչ մի դեպքում չձանաչելու Թուրքիային վերաբերող և թուրքական Ազգային կառավարության չընդունած ու Ազգային մեծ ժողովի չվավերացրած որևէ միջազգային ակտ»⁵: Մեջբերումը ցույց է տալիս, որ այն առաջին հերթին Սևրի պայմանագրի դեմ էր ուղղված, ուստի և Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր չձանաչել այդ պայմանագիրը: Խորհրդային Ռուսաստանն ի սկզբանե չի ձանաչել հայ ժողովրդի նվիրական իղձերն արտահայտող Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ՝ «Հայաստան» բաժնի 88-93-րդ հոդվածները, որոնք ամբողջությամբ վերաբերում էին Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրագործմանը⁶:

Դեռ ավելին, վերոնշյալ 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ Խորհրդային Ռուսաստանը պաշտոնապես ձանաչում էր Թուրքիայի «Ազգային ուխտ»-ը⁷: Դա նշանակում էր, որ ՌՍԴԽԸ-ն ձանաչում էր 1877 թ. ռուս-թուրքական նախկին պետական սահմանը, ըստ որի՝ Կարսը և Արդահանն անցնելու էին Թուրքիային: Քանզի 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի խորհրդարանի ընդունած «Ազգային ուխտ»⁸ կոչված փաստաթուղթը հռչակել էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, որով ամենից առաջ հասկացվում էր 1877 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանը: Այսինքն՝ Թուրքիայի անբաժան մաս էին հայտարարվում ոչ միայն

4 Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 142, **Պալոյան Գ.**, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 265-268, նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.» (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող **Ղազարխանյան Վ. Լ.** ուղիղներ, Եր., 2000, էջ 58-59, (այսուհետև Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.):

5 Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 258, տե՛ս նաև **Պալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 265, 267:

6 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020, էջ 141-144:

7 **Պալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 267:

8 **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 64:

Արևմտյան Հայաստանի նահանգները, այլև 1878 թ. ի վեր Սան Ստեֆանոյի և ապա Բեռլինի պայմանագրերով շուրջ 40 տարի Ռուսական կայսրության և ապա Հայաստանի Հանրապետության օրգանական մաս հանդիսացող ամբողջ Կարսի մարզը (Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի օկրուգներով)՝ 18784 թառ. կմ տարածք⁹:

Փաստավավերագրական նյութերը ցույց են տալիս, որ 1920 թ. ամռան ռուս-թուրքական բանակցությունները պայմանագրով չամրագրվեցին հենց Հայկական հարցի՝ հայ-թուրքական սահմանա-տարածքային խնդրի պատճառով: Բանն այն է, որ այդ բանակցությունների ժամանակ, ավելի ստույգ՝ օգոստոսի 13-ին, Գ. Չիչերինը թուրքական կողմին առաջարկել էր Արևմտյան Հայաստանի **Վանի, Բիթլիսի և Մուշի** նահանգների արևելյան շրջանների որոշ տարածքներ զիջել Հայաստանին¹⁰: Բայց այդ առաջարկը թուրք պատվիրակների զարմանքն ու տարակուսանքն է հարուցում¹¹: Գ. Չիչերինի այդ առաջարկի վերաբերյալ ԹԱՄԺ-ին զեկույց ներկայացնելու համար Բեքիր Սամի բեյի տեղակալ Յուսուֆ Քեմալը, ինչպես նաև Մ. Քեմալի հանձնարարությամբ այդ ժամանակ Մոսկվայում գտնվող եղեռնագործ Իսմայիլ Էնվեր փաշայի հորեղբայր Խալիլ փաշան մեկնում են Թուրքիա (Անգորա): Ի դեպ, առաջ անցնելով ասենք, որ երբ ավելի ուշ ԹԱՄԺ կառավարության նախագահ Մուստաֆա Քեմալ փաշային զեկուցել են դրա մասին, նա Գ. Չիչերինի պահանջը, ոչ ավել, ոչ պակաս, որակել է որպես «իմպերիալիստական»¹²:

Արևմտյան Հայաստանի այդ տարածքների առնչությամբ Գ. Չիչերինի պահանջի մասին է վկայում նաև Լ. Շանթի գլխավորած պատվիրակության անդամ Համբ. Տերտերյանը հետագայում գրած իր հուշերում: Հ. Տերտերյանը գրում է, որ հունիսի կեսերին, երբ Տաճկահայաստանի մասին տեղեկագիր ներկայացրին Չիչերինին, նա Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացավ բավարարել հայերին՝ «Տաճկահայաստանի որոշ հողամասեր միացնելով Հայաստանին եւ նրան ապահովելով ելք դէպի Սեւ ծով»¹³:

Գ. Չիչերինի պայմանա-առաջարկը, որ փոքր-ինչ նման է Անտանտի տերությունների 1920 թ. ապրիլի Սան Ռեմոյի խորհրդաժողովում թուրքերին ներկայացված Հայաստանին առնչվող պայմանագրի նախագծին, մեր կարծիքով, արվել է նպատակ ունենալով Հայաստանը դուրս բերելու Անտանտի ազդեցությունից և քաղաքականապես կողմնորոշելու դեպի Խորհրդա-

9 Տե՛ս Конопка С. Р., Кавказ, Тифлис, 1914, էջ 95.

10 Փաստաթղթերում հենց այդպես է արձանագրված, թեև պատմականորեն Բիթլիսը և Մուշը նույն նահանգի մեջ են եղել: Այստեղ միանգամայն հնարավոր է, որ վերջինս շփոթվել է Կարինի (Երզրումի) նահանգի հետ: Խմբ.:

11 Տե՛ս ДВП СССР, հատ. 4, М., 1960, էջ 658, **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Ղաթը (հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ), Եր., 1991, էջ 252, նաև **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 264:

12 **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 264:

13 **Տերտերյան Հ.**, Հայաստանի Հանրապետութիւնը եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լ. Շանթի պատվիրակութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1954, N 2 (փետրվար), էջ 14, (այսուհետ՝ **Տերտերյան Հ.**, նշվ. աշխ., «Հայրենիք», Բոստոն, 1954):

յին Ռուսաստան: Այս նպատակն ակներև դարձրեց նաև այն, որ բանակ-
ցությունների հենց սկզբում Գ. Չիչերինը առաջարկել էր, որ հայերը ձեռք
քաշեն դաշնակիցներից ու Սևրի խորհրդաժողովի օրակարգից և Հայկական
հարցի լուծումը հանձնեն Խորհրդային Ռուսաստանի իրավասությանը¹⁴: Եվ
հենց այս նկատառումներով Գ. Չիչերինը, մասամբ նաև Հայաստանում Ռու-
սաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը և հավանաբար էլի մի
քանի գործիչներ մինչև ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովի նախօրյա-
կը՝ 1921 թ. հունվարի երկրորդ կեսը, պաշտպանել են այդ առաջարկը:

Սակայն, ինչպես պարզվում է, Չիչերինի համեստ առաջարկ-պահանջն
աջակցություն չի ստանում խորհրդային պետության բարձրագույն ղեկա-
վարներ Վ. Լենինի, Լ. Տրոցկու, Ի. Ստալինի և այլոց կողմից: Այս հարցում
քեմալականներին (թուրքական պատվիրակությանը) օգնության է հասնում
բոլշևիկյան կուսակցության և խորհրդային պետության առաջնորդ Վ. Լենին-
նը: Խնդիրը հարթելու նպատակով Բ. Սամի բեյը օգոստոսի 14-ին հանդի-
պում է Վ. Լենինի հետ: Խորհրդային կառավարության ղեկավարի հետ ունե-
ցած այդ «սիրալիր ու սրտաբաց» ընդունելությունը հանգեցնում է նրան, որ
ոչ միայն մերժվում է Գ. Չիչերինի առաջարկը, այլև թուրքերը ստանում են
Հայաստանի տարածքում **Սարիղամիշն** ու **Շահթախթին** գրավելու արտո-
նություն (թույլտվություն), որպեսզի այդ ճանապարհով Կարմիր բանակը
ցամաքով անմիջապես կապվեր Թուրքիային (Անատոլիային), իսկ քեմալա-
կաններն էլ Նախիջևանի վրայով կապվեին Ադրբեջանին¹⁵: Տարօրինակն
այն է, որ, թեև այդ օրերին Թիֆլիսում կնքված **օգոստոսի 10-ի** հայ-ռուսա-
կան միջանկյալ համաձայնագրով Նախիջևանն անցնելու էր Կարմիր բանա-
կի հսկողությանը, մի քանի օր անց նույն խորհրդային կողմը հանձին Վ. Լե-
նինի, թույլ էր տալիս, որ թուրքերը գրավեն Նախիջևանի երկրամասին
պատկանող Շահթախթին՝ իր երկաթուղային հանգույցով մինչև Ջուլֆա: Մ-
յուս կողմից Սարիղամիշի նման ռազմավարական նշանակության հենակե-
տի գրավման արտոնություն տալը քեմալականներին նաև Հայաստանի վրա
հարձակման ազատություն էր տալիս: Ի դեպ, Սարիղամիշ-Շահթախթի
թուրքական գրավման թույլտվությանը դեմ է եղել, թերևս, միայն Հայաստա-
նում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը՝
կռահելով քեմալականների գավթողական նկրտումները¹⁶:

Նկատի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ ռուս-
թուրքական հուլիս-օգոստոսյան խորհրդաժողովը օգոստոսի 24-ին ամ-
փոփվեց ռուս-թուրքական պայմանագրի նախագծի ստորագրմամբ: Գ. Չի-

14 Տե՛ս **Տերտրյան Հ.**, նշվ. աշխ., «Հայրենիք», Բոստոն, 1954, N 1 (հունվար), էջ 10:

15 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (նախկին ՄԼԽԿԿԱ), ֆ. 64, ց. 2, գ. 11,
թ. 68, 75, 86: **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 27, նաև Հայոց
պատմություն, հատ IV, գիրք 1-ին, նորագույն շրջան, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 251:

16 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 30:

չերինի փոքրիշատե հայանպաստ դիրքորոշման պատճառով այն վերջնական պայմանագիր չդարձավ: Թուրքական պատվիրակությունը պայմանագրի նախագիծը տարավ Թուրքիա (Անգորա)՝ իր կառավարության հետ համաձայնեցնելու: Սակայն հետագա իրադարձություններն այնպիսի ընթացք ստացան, որ պայմանագրի կնքումը հետաձգվեց ավելի քան կես տարի, մինչև որ դարձյալ Մոսկվայում կայացած ռուս-թուրքական 2-րդ խորհրդա-ժողովի ավարտին՝ 1921 թ. մարտի 16-ին (18-ին), ստորագրվեց «բարեկամության և եղբայրության» պայմանագիր՝ հագեցած բովանդակությամբ ու կրկնակի ավելի՝ 16 հոդվածով:

Իսկ քենալականները Ռուսաստանի և Անտանտի տերությունների հետ երկակի դիվանագիտություն էին վարում. եթե անհրաժեշտ էր, դառնում էին արևմտյան ինպերիալիստների դեմ պայքարող ուժ և անգամ «կոմունիստ», իսկ հակառակ դեպքում՝ ընդգծված հակակոմունիստ: Սա թուրքական դիվանագիտության փորձարկված «զենքերից» էր, որով առաջնորդվում է նաև ժամանակակից Թուրքիան:

2. 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. Արցախյան պատերազմների համեմատական քննություն

Սևրի պայմանագիրը չեղարկելու, նաև թուրքական «Ազգային ուխտ»-ով ծրագրված արևելահայ տարածքների մի մասը բռնազավթելու նպատակով քենալական Թուրքիան՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարության գիտությամբ ու լուռ համաձայնությամբ և արևմտյան «դաշնակիցների» անտարբերության պայմաններում 1920 թ. սեպտեմբերի 28-ին սանձազերծեց թուրք-հայկական երկրորդ պատերազմը: Քենալականների հեռահար նպատակը ոչ միայն Սևրի պայմանագրի տապալումն էր, այլև առհասարակ «հայկական բանակի և հայկական պետության ոչնչացումը»¹⁷: Այդ ադետալի պատերազմում Հայաստանի նորաստեղծ բանակն ընդամենը 52 օր կարողացավ դիմադրել, քանի որ իր բարձրության վրա չգտնվեց բանակի հրամանատարությունը, կազմալուծիչ դեր խաղաց նաև բոլշևիկների հակապետական քարոզչությունը: Հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ մարտերի, ընկավ Կարս քաղաք-ամրոցը: Հայաստանը, ծանր պարտություն կրելով իր դարավոր ախոյանից, հայտնվեց անկախ պետականությունն ու իր բնիկ տարածքները կորցնելու վտանգի առջև: Պատերազմում Հայաստանի պարտության հետևանքով 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլում ստորագրվեց մի կողոպտիչ պայմանագիր: Սակայն, ինչպես հայտնի է, մինչ ՀՀ պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի

17 Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1943, էջ 314.

ստորագրելը՝ նոյեմբերի 29-ին, Հայհեղկոմը հռչակագիր էր հրապարակել Հայաստանի խորհրդայնացման մասին, իսկ դեկտեմբերի 2-ի կեսօրին Հայաստանում իշխանափոխություն էր եղել (նախկին կառավարությունը կամավոր հրաժարական էր տվել, և իշխանությունն անցել էր Հայհեղկոմի ձեռքը): Բայց դա բնավ չմեղմեց Հայաստանի ու հայ ժողովրդի կրած տառապանքների ու կորստի ցավը: Քանի որ ակնհայտ էր Ալեքսանդրապոլի պայմանագրի իրավական ուժ չունենալու փաստը, քեմալական Թուրքիան թուրք-հայկական պատերազմում բոլշևիկյան Ռուսաստանի օգնությամբ ձեռք բերած հաղթանակի պտուղները պետք է վայելեր Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդածողովում:

Արդ, ուսանելի է 100-ամյա հեռվից պատմական զուգահեռներ ու համեմատություններ անցկացնել 1920 թ. հայ-թուրքական 52-օրյա և մեր ժամանակների Արցախյան 2-րդ՝ 44-օրյա պատերազմների միջև: Այսպես՝ Արցախյան պատերազմը զարմանալի զուգահեռությամբ սկսվեց ընդամենը մեկ օրվա տարբերությամբ՝ սեպտեմբերի 27-ին: Երկու անգամն էլ պատերազմը սանձազերծել է հակառակորդը՝ առաջին անգամ Թուրքիան, իսկ երկրորդ անգամ՝ Ադրբեյջանը իր մեծ եղբոր՝ Թուրքիայի համակողմանի հովանավորությամբ և արաբ ու աֆղան վարձկանների, թուրքական ու պակիստանյան հատուկջոկատայինների ներգրավումով: Կարելի է փաստել, որ այս երկու պատերազմներում էլ հայկական կողմն ունեցել է ձախողումներ, և ի վերջո կրել ծանր պարտություն: Եվ վերջապես, երկու դեպքում էլ հայ ժողովուրդը հայրենի տարածքների և անգամ պետականության կորստի վտանգի առջև է կանգնած եղել:

Ինչ վերաբերում է պատերազմական գործողություններին արևմտյան տերությունների ու միջազգային հանրության արձագանքներին, ապա երկու դեպքում էլ դրանք սահմանափակվեցին հակամարտող կողմերին ուղղված կրակը դադարեցնելու, հաշտվելու և բանակցությունները վերսկսելու կոչերով:

Ի տարբերություն արևմտյան տերությունների՝ երկու դեպքում էլ Հայաստանի ու Հայկական հարցում մեծ դերակատարություն էր ստանձնել Ռուսաստանը՝ անկախ նրա վարչակարգից և իշխանության ձևից: 100 տարիների հեռավորությունից Ռուսաստանի դերակատարության մասին պատմական զուգահեռները ուշագրավ նմանություններ են երևան հանում: Ինչպես 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, այնպես էլ մեր ժամանակների Արցախյան պատերազմի վերջնամասում, երբ հայկական զինված ուժերն արդեն ձախողվում էին, Ռուսաստանը միջամտեց հակամարտությանը և ստացավ իրեն հասանելիքը: Առաջին դեպքում թուրքերի հետ գործակցությամբ Հայաստանի մի հատվածը խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց և անցավ Խորհրդային Ռուսաստանի հովանավորության ներքո, իսկ 2-րդ դեպքում ՌԴ-ն պա-

տերագմի վերջնափուլում, կրկին հանդես գալով որպես միջնորդ, կարողացավ կրակը դադարեցնել 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ստորագրմամբ: Դրանով նա հնարավորություն ստացավ Ղարաբաղում առնվազն 5 տարով տեղակայելու ռուսական խաղաղապահ ուժեր:

3. Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդածողովի դիվանագիտական նախապատրաստումը

Այն բանից հետո, երբ Հայաստանը պարտվեց հայ-թուրքական պատերազմում, խորհրդայնացավ ու, ըստ էության, անկախությունը կորցրեց, 1920 թ. դեկտեմբերի սկզբներից նախապատրաստական քայլեր ձեռնարկվեցին ռուս-թուրքական 2-րդ կոնֆերանսը (խորհրդածողովը) հրավիրելու համար: Նման պայմաններում հասկանալի է, որ այս խորհրդածողովի հիմքում պետք է դրվեին ռուս-թուրքական 1-ին խորհրդածողովում արդեն հավանության արժանացած թուրքական «Ազգային ուխտ»-ի հիմնադրույթները:

Դեռ նոյեմբերի կեսերին Անգորայի քենալական կառավարությունն առաջինը դիմեց ՌՄԴԽՀ կառավարությանը՝ 1920 թ. ամռանը Մոսկվայում ընդհատված ռուս-թուրքական բանակցությունները վերսկսելու և օգոստոսի 24-ի նախաստորագրված պայմանագրի ոգով վերջնական բարեկամական պայմանագիր կնքելու համար: Արդեն դեկտեմբերի 9-ին Գ. Չիչերինը պաշտոնապես հայտնում է, որ «Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ստացել է թուրքական կառավարության առաջարկությունը Մոսկվայի կոնֆերանսի վերաբերյալ և ուրախությամբ ողջունում է այդ նախաձեռնությունը»¹⁸:

Այստեղից կարելի է անել 3 հետևություն. ա) ռուս-թուրքական կոնֆերանսի նախաձեռնությունը թուրքական կողմինն էր, բ) հրավիրվելիք կոնֆերանսի հիմքում դրվելու էր օգոստոսի 24-ին նախաստորագրված Մոսկվայի պայմանագիրը և գ) նոր ռուս-թուրքական կոնֆերանսը որևէ կապ չէր ունենալու Ալեքսանդրապոլի պայմանագրի հետ: Այսինքն՝ անկախ այն բանից՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կկնքվեր թե ոչ, մինևույն է, արդեն նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին կողմերի միջև պայմանավորվածություն կար ռուս-թուրքական կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ: Նշանակում է ռուս-թուրքական կոնֆերանսում անդրադարձ չէր լինելու Ալեքսանդրապոլի պայմանագրին, ուստի անհիմն ու կեղծ են խորհրդահայ պատմաբանների այն բոլոր դատողությունները, թե իբր Մոսկվայի պայմանագիրը նպատակ ուներ վերանայելու և չեղյալ համարելու Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագիրը: Հրավիրվելիք կոնֆերանսը

18 ՀԱՍ, ֆ. 4033, ց. 2, գ. 1164, թ.1: ДВП СССР, հատ. 3, մ., 1959, էջ 371.

անհրաժեշտ էր քենալականներին՝ ճշգրտելու ոչ միայն թուրք-անդրկովկասյան սահմանը, այլև դրանից ոչ պակաս կարևոր՝ Ռուսաստանից սպառազինություն, ոսկի, դիվանագիտական աջակցություն ստանալու խնդիրը՝ Անտանտին ու հունական ճակատին դիմակայելու համար:

Հարկ է արձանագրել, որ Հայաստանում իշխանության ղեկը ստանձնած Հայհեղկոմը, միամտորեն կարծելով, թե Հայաստանի խորհրդայնացմամբ հայ-թուրքական հարաբերություններն իբր թևակոխել են բարեկամական փուլ, հույս էր տածում, որ Խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ հնարավոր կլինի բարեկամաբար լուծել անցյալից կուտակված կնձռոտ խնդիրները, այդ թվում՝ տարածքային-սահմանային հարցերը: Մանավանդ որ Երևանում կայացած հայ-ռուսական (Շանթ-Լեգրան) բանակցությունների արդյունքում 1920 թ. հոկտեմբերի 28-ին նախաստորագրված հայ-ռուսական եզրափակիչ որոշման արձանագրությամբ ճանաչվել էր Հայաստանի իրավունքը Նախիջևանի և Զանգեզուրի գավառների վրա, ինչպես նաև ՌՄԴԽՀ կառավարության պահանջով՝ ԹԱՄԺ կառավարությունն իր գործերը պետք է հետ քաշեր 1914 թ. ռուս-թուրքական նախկին պետական սահման¹⁹:

Հայաստանի խորհրդայնացման և Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 3-ին, Բ. Լեգրանը Երևանից Բաքու հեռախոսագրույց է ունեցել Գ. Օրջոնիկիձեի հետ: Զրույցի ժամանակ շոշափվել է Ալեքսանդրապոլի պայմանագրի խնդիրը: Լեգրանը տեղեկացնում էր, որ «Երեկ հին կառավարության պատվիրակությունը, երբ Հայաստանում տեղի ունեցավ հեղաշրջում, ստորագրեց ծանր և աննպաստ պայմանագիր: Ես հարցում արեցի Միլիվանուց: Նա հաղորդեց, որ թուրքերը հասկանում են, որ հեղաշրջման դեպքում պայմանագիրը կորցնում է ուժը, և պետք է կնքվի նորը»²⁰: Իսկ Գ. Օրջոնիկիձեն Բ. Լեգրանին փոխանցում էր, որ Մոսկվան համաձայն է թուրքերի հետ պայմանագիր կնքելու, և քաղաքական ձեռքբերում կլիներ, եթե թուրքերը չեղյալ համարեին դաշնակների հետ կնքած պայմանագիրը և բանակցություններ սկսեին Հայաստանի նոր կառավարության հետ իրենց մասնակցությամբ²¹: Այստեղ դեռևս խոսք չկար ռուս-թուրքական բանակցություններին Հայաստանի մասնակցության մասին, ինչը հաստատվում է Հայաստանի արտգործոժողկոմ Ալ. Բեկզադյանի՝ քենալական կառավարությանն ուղղված դեկտեմբերի 10-ի հայտագրով²²:

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 2, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 315, նաև՝ Нагорный Карабах, док. и ком., т. 1, М., 2008, էջ 526.

20 Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества (документы и комментарий)», сост. Проф. Барсегов Ю. Г., т. 2, ч. 1, М., 2003, այսուհետ՝ Геноцид армян (документы и комментарий), էջ 282:

21 Տե՛ս Նոյն տեղում, էջ 283.

22 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (1828-1923 թթ.), խմբ. Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, (այսուհետ՝ «Հայաստանը...»), էջ 465-467:

Ռուս-թուրքական կոնֆերանսի նախապատրաստության առաջին գործնական քայլը կարելի է համարել 1920 թ. դեկտեմբերի 8-ը, երբ որոշակիացվեցին կոնֆերանսի ձևաչափը և տեղը (լինելու էր երկկողմ ռուս-թուրքական խորհրդաժողով Մոսկվայում):

Ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովի դիվանագիտական նախապատրաստման փուլում հաշվի առնելով ռուս-թուրքական 1-ին խորհրդաժողովի փորձը՝ թուրքերը կասկածում էին, թե Ռուսաստանը, ի դեմս Գ. Զիչերինի, կարող է Հայաստանի օգտին տարածքային որոշակի պահանջներ ներկայացնել Թուրքիային. խոսքը դարձյալ արևմտահայ Վանի, Բիթլիսի և Մուշի մասին էր: Ընդ որում այդ մասին Գ. Զիչերինը դարձյալ մի քանի անգամ ակնարկել էր 1920 թ. վերջի և 1921 թ. սկզբների իր նամակգրություններում: Հասկանալի է, որ այդ արևմտահայ տարածքները պետք է միացվեին արդեն Խորհրդային Հայաստանին: Մասնավորապես, ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղքյուրոյին ուղղված դեկտեմբերի 3-ի նամակում Գ. Զիչերինն առաջարկում էր թուրքերի հետ կնքվելիք պայմանագրում ձևակերպել Հայաստանի անկախությունը այնպիսի սահմաններով, որը կներառի Թուրքահայաստանի որոշ մասեր²³: Այնուհետև, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին հասցեագրված մեկ այլ՝ դեկտեմբերի 6-ի նամակում նա պնդում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները պետք է որոշվեն խառը հանձնաժողովով ՌՍԴԽՀ մասնակցությամբ՝ ներառելով Թուրքահայաստանի որոշ մաս²⁴:

Այս կապակցությամբ ԹՎՄԺ կառավարության արտգործկոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարը դեկտեմբերի 15-ին Գ. Զիչերինին ուղղված գրությամբ ցանկանում էր իմանալ, թե Մոսկվան ինչպիսի դիրք է գրավելու Հայկական հարցի վերաբերյալ. «Մեզ լուրեր են հասնում, որ դուք ցանկանում եք մեր միջև եղած դաշինքը վերացնել և Հայաստանին վերադարձնել թուրք բնակչությամբ հողամասերը»²⁵: Բացի դրանից՝ փաստերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն Ի. Ստալինի և ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի մյուս անդամների, Գ. Զիչերինը թուրքերին ցույց տրվելիք ռազմական և ֆինանսական օգնությունը պայմանավորում էր նրանց Հայաստանի ռազմակալած շրջաններից հեռացմամբ և արևմտահայ որոշ տարածքների վերադարձով²⁶: Հավելենք նաև, որ ԹՎՄԺ կառավարության արտգործկոմիսարի պաշտոնակատար Ա. Մուխթարը Անգորայից Գ. Զիչերինին ուղղված մեկ այլ՝ դեկտեմբերի 27-ի գրությամբ պահանջում էր խնդրի պարզաբանում և առաջացած հակասության վերացում, այլապես նա անօգուտ էր համարում խորհրդաժողովի հրավիրումը: Ավելին, Ա. Մուխթարը դիվանագիտորեն սպառնում էր, որ հակառակ դեպքում թուրք ժողովուրդը կարող

23 Տե՛ս Դեոցիդ արմյան (դոկումենտի և կոմենտարիյ), հիւտն. 2, մաս 2, Մ., 2005, էջ 413.

24 Տե՛ս նոյն տեղում, էջ 414:

25 ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 24-25:

26 Տե՛ս Դեոցիդ արմյան (դոկումենտի և կոմենտարիյ), հիւտն. 2, մաս 1, Մ., 2003, էջ 259-260.

է կողմնորոշվել (շրջվել) դեպի Արևմուտք²⁷: Ասվածից ակներև է դառնում, որ քեմալականները համաձայն չէին անգամ 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագծին, իսկ Վանի, Բիթլիսի և Մուշի մասին այս պարագայում խոսք լինել չէր կարող:

Սակայն, ինչպես պարզվում է, այս անգամ էլ Գ. Չիչերինի հայանպաստ մոտեցումները ըմբռնում ու աջակցություն չեն գտել ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղքյուրոյում: Հայկական տարածքների հարցում Գ. Չիչերինի դիրքորոշման վերաբերյալ թուրք ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչներ Արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշային, ՌՄԴԽՀ նորանշանակ դեսպան Ալի Ֆուադ փաշային, Յուսուֆ Քեմալին, Ռիզա Նուր բեյին որոշ պարզաբանումներ է տվել Թուրքիայում ՌՄԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. (Պ.) Մդիվանին: Վերջինս 1921 թ. հունվարի սկզբին Ալեքսանդրապոլից տեղափոխվել էր Կարս, իսկ ամսվա վերջին պիտի ուղևորվեր Անգորա: Նրա բացատրությամբ՝ Գ. Չիչերինի նման դիրքորոշման նպատակը եղել է «հանգստացնել Անգլիային ու եվրոպական պրոլետարիատին» և նրանց ցույց տալ, թե Խորհրդային Ռուսաստանը իբր մտահոգ է հայկական հողերի հարցով: Մդիվանին վստահեցրել է թուրք պատվիրակներին, որ Մոսկվայի խորհրդաժողովում նման հարց չի բարձրացվի, և որ նրա աշխատանքներին կխառնվի ազգությունների գործերի կոմիսար Ի. Ստալինը²⁸:

Արդեն 1921 թ. հունվարի կեսերին Մոսկվա խորհրդաժողովի մեկնող թուրքական պատվիրակությունը գտնվում էր Կարսում և չէր շտապում՝ սպասելով իրենց նախապայմաններից գլխավորի՝ խորհրդային կողմից Արևմտահայաստանից տարածքային պահանջ չներկայացնելու հարցի պատասխանին: Այս կապակցությամբ Անդրկովկասի փաստացի ղեկավար Գ. (Ս.) Օրջոնիկիձեն հունվարի 14-ին Գ. Չիչերինին ուղղված հեռագրում առաջարկում էր ընդունել թուրքերի նախապայմանը, այն է՝ Մոսկվայի խորհրդաժողովի օրակարգից հանել հայկական Վան, Մուշ և Բիթլիս մարզերի հարցի քննարկումը²⁹:

Թուրքերին Չիչերինի ներկայացրած հայանպաստ պահանջի մասին տեղեկանում է նաև Ստալինը, որը շտապում է իր մտահոգությունը հայտնել ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին: Նա փետրվարի 12-ին Վ. Լենինին ուղղված ձեռագիր նամակ է գրում կոպիտ, հեզնական ու անվայելուչ արտահայտություն թույլ տալով Գ. Չիչերինի հասցեին. «Ընկ. Լենին, գրում է Ի. Ստալինը, - ես միայն երեկ տեղեկացա, որ Չիչերինը իսկապես ինչ-որ ժամանակ **հիմար** և **պրովոկացիոն** (սադրիչ - Ա. Հ.) պահանջ է

27 Տե՛ս Գеноцид армян (документы и комментарий), հատ. 2, մաս 2, Մ., 2005, էջ 342.

28 Գеноцид армян (документы и комментарий), т. 2, ч. 1, М., 2003, с. 358.

29 Տե՛ս նույն տեղում, էջ 352:

ներկայացրել թուրքերին՝ այդ թուրքական գերակշիռ մեծամասնությամբ բնակեցված Վան, Մուշ և Բիթլիս մարզերը մաքրելու մասին: Դա հայկական իմպերիալիստական պահանջ է և չի կարող լինել մեր պահանջը: Հարկավոր է արգելել Չիչերինին թուրքերին նոտա ուղարկել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով»³⁰: Ի. Ստալինի այդ զգուշացումն, ըստ ամենայնի, արժանացել է Վ. Լենինի, նաև Ս. Օրջոնիկիձեի, Բ. Մդիվանու և մյուսների հավանությանը:

Խորհրդաժողովի հրավիրման նախօրեին իր հակահայ կեցվածքով աչքի է ընկել նաև Ադրիեդկոմի նախագահ Ն. Նարիմանովը: Դա արտացոլվում է փետրվարի 16-ի և 21-ի Վ. Լենինին ուղղված նամակներում: «Թանկագին Վլադիմիր Իլյիչ,- կարդում ենք փետրվարի 16-ի նամակում,- Մոսկվա է գալիս թուրքական պատվիրակությունը մեր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկու հետ: Նրանց համար ամենանրբանկատ հարցը հայկականն է: Նրանք ասացին, որ Հայկական հարցը կյանքի և մահվան հարց է: Եվ եթե Մոսկվան Հայկական հարցի պատճառով անգորացիներին վանի իրենից, ապա նրանք հուսահատված կարող են նետվել Անտանտի գիրկը»³¹: «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ,- գրում է նամակի վերջում Ն. Նարիմանովը,- որ Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը: Նա չափից ավելի է հրապուրված Հայկական հարցով և հաշվի չի առնում, որ հենց այդ հարցի պատճառով կարող է տեղի ունենալ անգորացիների հետ կապերի խզում: ...Եվ եթե ուզում ենք Ադրբեջանը պահել մեզ հետ, մեզ պետք է, ինչ էլ որ լինի, անգորացիների հետ կնքել ամուր դաշինք»³²:

Մի քանի օր անց՝ փետրվարի 21-ին, Հայկական հարցի նկատմամբ դիրքորոշումով մուսավաթականներից ոչնչով չտարբերվող նույն բոլշևիկ Ն. Նարիմանովը դարձյալ նամակ է հղում Վ. Ի. Լենինին՝ կրկին հորդորելով, որ թուրքական պատվիրակության հետ բանակցություններում Հայկական հարցը դեր չխաղա, հիշեցնելով նաև, որ Հայաստանում տապալվել է խորհրդային իշխանությունը³³: Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկին ևս, ձայնակցելով իր անմիջական ղեկավար Նարիմանովին, այդ օրերին դարձյալ կոչ էր անում Մոսկվայի բանակցությունների օրակարգից հանելու Հայկական հարցը, թույլ չտալու Նախիջևանի միացումը Հայաստանին³⁴: Նարիմանովը ևս վճռական էր Նախիջևանի հարցում: Նա զգուշացնում էր, որ եթե Նախիջևանի հարցը չլուծվի Ադրբեջանի օգտին, ապա Ադրբեջանում չեն բացառվի պանիսլամիզմի ուժեղացումը և հակախորհրդային ելույթները: Այսինքն՝ ռուս-թուրքական կոնֆերանսի

30 Геноцид армян, (док. и ком.), т. 2, ч. 1, с. 374, УЛНЧУ, ф. 3, г. 1, отд. крс 52, N 14, տե՛ս նաև: Խաչատրյան Կ.,

Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., հրատ., 2007, էջ 121-122:

31 Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 378, «Գարուն», Եր., 1989, N 4, էջ 50-51:

32 Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 379.

33 Տե՛ս նույն տեղում, էջ 387.

34 Տե՛ս նույն տեղում, էջ 390.

նախօրեին Նարիմանովը պահանջում էր հարցը լուծել Ադրբեջանի օգտին³⁵:

Այս իմաստով, ըստ էության, որևէ տարբերություն չի եղել մուսավաթականների և Ն. Նարիմանովի նման ազգային-կոմունիստների միջև: Ի դեպ, նույնպիսին է եղել նաև վրաց մենշևիկների ու կոմունիստների դիրքորոշումը Վրաստանի կենսական շահերին առնչվող հարցերին, ինչը, ցավոք, չի կարելի ասել հայ կոմունիստների մասին: Օրինակ, հայ կոմունիստներից ոչ հայանպաստ վարքագիծ է ցուցաբերել Անաստաս Միկոյանը: Այսպես, նա պնդում էր, որ պետք է պայքարել հայ բուրժուազիայի «իմպերիալիստական ձգտումների» դեմ:

Ի վերջո, Մոսկվայի խորհրդատողովի բացման նախօրյակին թուրք պատվիրակները հանդիպում են նաև ՌՍԳԽՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինին: Այդ ամենից հետո վերջինս ակնարկով թուրքերին հասկացնում է, որ Հայաստանի վերաբերյալ թեման կարելի է փակված համարել³⁶: Ռուս-թուրքական խորհրդատողովի բացման օրը՝ փետրվարի 26-ին, Վ. Լենինը անձամբ ընդունում է թուրք պատվիրակներին և այդ ու այլ հարցերի վերաբերյալ տալիս համապատասխան երաշխիքներ³⁷:

4. Հայաստանի պատվիրակության՝ խորհրդատողովին մասնակցության հարցը

Մինչ խորհրդատողովի հրավիրումը՝ ՌՍԳԽՀ կառավարությունը գիտակցելով, որ հայ-թուրքական տարածքային-սահմանային հարցերի լուծումը, առանց Խորհրդային Հայաստանի մասնակցության, կհամարվի միջազգային իրավունքի կոպիտ խախտում, խորհրդատողովին մասնակցության հրավեր է ուղարկում Հայաստանի (ՀՄԽՀ) կառավարությանը: Խորհրդային ղեկավարության հաշվարկով Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին հակազդող քայլ կլիներ մի կողմից Սևրի, մյուս կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրերին: Խորհրդային ղեկավարությունը քաղաքական հավասարակշռությունը պահպանելու համար չէր կարող հրավեր չուղարկել նաև Խորհրդային Ադրբեջանին: Եվ այդ մասին Գ. Չիչերինը նախապես տեղեկացնում է թուրքական կողմին³⁸: Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը գլխավորել է ՀՄԽՀ արտգործոժողկոմ Ալ. Բեկզադյանը:

35 Տե՛ս Սիմոնյան Հր., Նախիջևանի խնդիրը Մոսկվայի պայմանագրում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտատղովի նյութեր) Եր., 2001, էջ 10:

36 Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 441:

37 Տե՛ս В. И. Ленин и Советская внешняя политика, М., 1969, էջ 116.

38 Տե՛ս ДВП СССР, һаш. 3, М., 1959, էջ 372, 391.

Բայց այն բանից հետո, երբ փետրվարի 18-ին գնացքով թուրքական պատվիրակությունը (ղեկավար՝ Յու. Քենալ բեյ) հասնում է Մոսկվա և տեղեկանում Հայաստանի ու Ադրբեջանի պատվիրակությունների՝ խորհրդածողովին մասնակցելու մասին, Անգորայի պատվիրակները մերժում են այդ առաջարկը և դրա փոխարեն առաջ քաշում երկկողմ ռուս-թուրքական կոնֆերանսի պայմանը՝ պատճառաբանելով, որ իրենք իբր լիազորված չեն մյուս երկրների, բայց նախևառաջ՝ Հայաստանի հետ բանակցելու³⁹։

Չնայած խորհրդային կողմը, ինչպես ասվեց, դեռ դեկտեմբերին էր թուրքական կողմին տեղյակ պահել խորհրդածողովին Հայաստանին ու Ադրբեջանին ուղղված մասնակցության առաջարկի մասին, սակայն թուրքերն այդ առնչությամբ գրավոր կամ բանավոր որևէ համաձայնություն չէին տվել։ Իսկ երբ թուրքական պատվիրակությունը ժամանեց Մոսկվա և հայտարարեց, որ ինքը լիազորված չէ Հայաստանի հետ բանակցելու, խորհրդային կողմը, այդ թվում՝ Հայաստանի պատվիրակությունը, կանգնեցին փաստի առջև։ Չկան տվյալներ, թե ռուսական կողմը ինչպես է արձագանքել թուրքերի այդ պնդմանը։ Կարելի է ենթադրել, որ առանց լուրջ դիմադրության, ընդունել է թուրքերի մերժումը։ Դեռ կոնֆերանսը չբացված՝ փետրվարի 26-ին, Գ. Չիչերինը հայ պատվիրակներին իրազեկում է, որ նրանք չեն կարող մասնակցել աշխատանքներին։ Այսինքն՝ գումարվելիք կոնֆերանսը քառակողմի փոխարեն լինելու է երկկողմ ռուս-թուրքական։

Այսպիսով՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հրավերը բավարար ուժ չի ունենում, որ Հայաստանի պատվիրակությանը թույլատրվի մասնակցել խորհրդածողովին, քանզի դրան դեմ է կանգնում թուրքական կողմը։ Այս առնչությամբ հարկ է անդրադառնալ հայ պատմագիտության մեջ շահարկվող այն հարցին, թե Մոսկվայի բանակցություններին Հայաստանի պատվիրակության չմասնակցելու գլխավոր պատճառը եղել է խորհրդածողովի գումարման օրերին Հայաստանում բռնկված Փետրվարյան ապստամբությունը և ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի երկու՝ մարտի 12-ի և 14-ի հայտնի ռադիոգիր-հեռագրերը Մոսկվա՝ Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցությունը խորհրդածողովին արգելելու վերաբերյալ։ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, բնականաբար, թշնամանքով ընդունեց խորհրդային վարչակարգի տապալումը Հայաստանում։ Դրան հակառակ՝ Թուրքիային ցանկալի էին Հայաստանի քաղաքական անկայունությունը, խառնակ իրավիճակը և նրա քաղաքականության հակառուսական ուղղվածությունը։ Սակայն համաձայն չենք այս առն-

39 Տե՛ս ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 68, թ. 25:

չությամբ պատմաբան Կ. Սարգսյանի արտահայտած այն մտքին, թե քեմալականները ջանում էին, որ «Մոսկվայի կոնֆերանսից առաջ Հայաստանում հեղաշրջում կատարվի և իշխանությունը կրկին անցնի դաշնակցությանը»⁴⁰, որպեսզի «Հայաստանը գրկվի Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից»⁴¹: Չենք կարծում, թե քեմալականները կուզենային Հայաստանում իշխանությունը կրկին անցնել իրենց համար ատելի դաշնակցականների ձեռքը միայն այն բանի համար, որ այդպես Հայաստանը կգրկվեր Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու իրավունքից: Առանց դրա էլ Հայաստանն արդեն գրկվել էր կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից: Որքան մեզ հայտնի է կոնֆերանսի նյութերից, թուրքերը որևէ ակնարկ անգամ չեն արել Փետրվարյան ապստամբության մասին՝ իրենց պահանջները կոշտացնելու նպատակով: Անգամ Ս. Վրացյանի մարտի 12-ի (նաև 14-ի) հայտնի հայտարարություններին թուրքերը որևէ կերպ չեն արձագանքել: Չկա փաստ, որ թուրքական կողմն օգտագործել է Ս. Վրացյանի այդ հեռագիրը՝ մերժելու հայկական պատվիրակության մասնակցությունը:

Իրականությունն այն է, որ առնվազն երկու շաբաթ առաջ՝ հենց խորհրդաժողովի հրավիրման նախօրյակին, Հայաստանի պատվիրակությանն արգելված է եղել մասնակցելու կոնֆերանսին: Խորհրդաժողովը, Հայաստանի պատվիրակության բացակայությամբ, հրավիրվել է փետրվարի 26-ին, իսկ ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի հեռագիրն ուղարկվել է, ինչպես ասվեց, մարտի 12-ին: Ս. Վրացյանի կառավարությունը և նրա պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ն անգամ տեղյակ չեն եղել, որ Հայաստանի պատվիրակությանն արգելված է մասնակցել խորհրդաժողովի աշխատանքներին, այլապես ավելորդ կլինեին նման առդիոգիր-հեռագիր ուղարկելը Մոսկվա:

Այսպիսով՝ Փետրվարյան ապստամբությունը կամ Ս. Վրացյանի հեռագրերը չէին ձախողումների պատճառը, այլ այն, որ թուրքերը «գլխացավանքից» ազատվելու համար չեն ցանկացել գործ ունենալ հայկական պատվիրակության հետ, որը, ի դեպ, Մոսկվա էր մեկնել համապատասխան պահանջներ պարունակող փաստաթղթերով ու քարտեզներով: Կրկին շեշտենք, որ եթե Հայաստանի պատվիրակությանն անգամ թույլատրվեր մասնակցել այդ խորհրդաժողովին, ապա կարելի է վստահաբար անդել, որ բանակցություններով որևէ էական բան չէր փոխվելու: Այստեղ խնդիրը ոչ միայն Հայոց պետականության չճանաչման փաստն էր, այլ նաև բարոյական տեսակետից նրա անտեսումը մի խորհրդաժողովում, որտեղ քննվելու և ճշգրտվելու էին Հայաստանի ու հայ ժողովրդի համար

40 Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., 2002, էջ 211:
41 Նույն տեղում, էջ 213:

կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային և այլ հարցեր: Եվ այս ամենը այն դեպքում, երբ և՛ քենալական, և՛ բոլշևիկյան կառավարություններն իրենք այդ ժամանակ միջազգայնորեն ճանաչված չէին:

5. Մոսկվայի արձագանքը Հայաստանի «Տեղեկատու գեկուցագրին»

Ինչպես արդեն նշվել է, 1921 թ. փետրվարի երկրորդ կեսին Մոսկվա մեկնած հայկական պատվիրակությունը իր հետ տարել էր օժանդակ փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական այլ նյութերի մեծ ու ամբողջական փաթեթ՝ «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու գեկուցագիր ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերտառությամբ, և հանձնել Ռուսաստանի արտգործոժողկոմատ: Սակայն հայկական պատվիրակության «Տեղեկատու գեկուցագիրը» ռուս-թուրքական խորհրդատուներին չներկայացվեց: Այդ փաստաթղթերը, շուրջ երկու ամիս մնալով ՌՄԴԽՀ արտգործոժողկոմի տեղակալ Լ. Կարախանի մոտ, ապրիլի կեսերին վերադարձվում են Ալ. Բեկզադյանին⁴²: Բայց և այնպես, հարկ է թռուցիկ կերպով ծանոթանալ Մոսկվայի բանակցությունների կապակցությամբ հատուկ Վ. Լենինին, Ի. Ստալինին և Գ. Չիչերինին հասցեագրված այդ փաթեթի բովանդակությանը:

Ջեկուցագրում ներկայացվում էր ՀՀ տարածքն ընդգրկող գավառների բնակչության կազմը՝ ըստ «Կովկասյան տարեցույց»-ի 1917 թ. տվյալների. ամբողջ բնակչությունը 1.926403 մարդ, որից 1.052497 կամ 54,6 տոկոսը՝ հայ, 514400 կամ 26,7 տոկոսը՝ թաթար, 78696 կամ 4,1 տոկոսը՝ քուրդ, 57761 կամ 2,9 տոկոսը՝ եզդի և 223049 կամ 11, 5 տոկոսը՝ ռուս, հույն, թուրք և այլն⁴³:

Տրված են ՀՀ ողջ տարածքը Խորհրդային Հայաստանին միավորելու պատմաաշխարհագրական, էթնիկական, տնտեսական և քաղաքական հիմնավորումները: Փաստաթղթերի այդ փաթեթում եղել են նաև քարտեզներ, որոնցում նշված էին հայ-թուրքական սահմանի վերաբերյալ չորս հնարավոր տարբերակ-առաջարկներ, որոնցից առավելագույնը Հայաստանի համար այն էր, որ ներառելու էր Մուրմալուն՝ Մեծ ու Փոքր Մասիսներով, ինչպես նաև Կարսի մարզի հիմնական մասը, իսկ նվազագույնը ներառող 4-րդ տարբերակով Հայաստանին մնալու էին Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանները, այն է՝ Արաքս և Արփաչալ

42 Տե՛ս Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 120:

43 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 4:

գծով մինչև Մեծ Աղբարա ու Ղըզըլդաշ լեռները, Մեծ Ղվու և Թիխնիս գյուղերը⁴⁴:

Հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ՀՄԽՀ պատվիրակության ներկայացրած 1-ին տարբերակով նախատեսվում էր հայ-թուրքական սահմանագիծը անցկացնել Արփաչայ և Արաքս գետերից դեպի արևմուտք ընկած Ալաջայի բարձունքներով՝ հասցնելով մինչև Կարսի ամրոցի արտաքին ամրություններ: Նման տարբերակ առաջարկելով՝ հայկական կողմը համարում էր, որ Հայաստանի սահմանի մեջ պետք է մտնեին Արևմտյան Շիրակի (Շուրագյալի) դաշտը, որը բաղկացած էր զուտ հայկական բնակավայրերից և տակավին Բագրատունիների ժամանակներից ժառանգված շատ հարուստ պատմամշակութային հուշարձաններից: Այդ տարածքի անցումը Հայաստանին հիմնավորվում էր նաև նրանով, որ դրանով Ջաջուռ-Ալեքսանդրապոլ-Արաքս-Երևան երկաթգիծը կպաշտպանվեր քուրդ-թաթարական ավազակային հարձակումներից: Եվ վերջապես, նման սահմանագծումը, հայկական կողմի պատկերացմամբ, էապես կթուլացներ Կարսի ռազմավարական նշանակությունը⁴⁵:

Այդուհանդերձ, հայ-թուրքական սահմանների մասին խորհրդածողովին ներկայացվող երեք տարբերակով Հայաստանին էին վերադարձվելու Սուրմալուի գավառը՝ Մեծ ու Փոքր Մասիսներով և Կարսի մարզի մի հատվածը: Ընդ որում, Հայկական պար (թուրքերեն անվանմամբ՝ Ադրիդաղ) լեռնաշղթան ունենալու էր ռազմավարական կարևոր նշանակություն և հուսալիորեն պաշտպանելու էր Հայաստանի հարավային սահմանը: Սուրմալու գավառը հայկական պահանջների մեջ ներառելու համար առաջին հերթին հիմք էր ծառայում այն հանգամանքը, որ այդ գավառը երբեք չէր եղել օսմանյան Թուրքիայի կազմում և առավել ևս այն նշված չէր թուրքական «Ազգային ուխտ»-ում: Իսկ այն տարբերակներում, որտեղ Հայաստանի կազմ էր ներառված Արևմտյան Շիրակը, հաշվի է առնված էթնիկ ու պատմամշակութային առումով դաշտի հայկական լինելու փաստը:

Հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանի կառավարության պատվիրակությունը չէր կարող ավելին ներկայացնել: Բնականաբար, նրանց պատկերացմամբ խոսք չէր կարող լինել Սևրի պայմանագրի ու անգամ արևմտահայ որևէ նահանգի՝ Խորհրդային Հայաստանին միացնելու մասին: Սակայն, ինչպես արդեն ասվեց, Հայաստանի պատվիրակությանը ոչ միայն չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, այլև սահմանների վերաբերյալ նրա ներկայացրած այս չորս համետ առաջարկներից և ոչ մեկը ուշադրության չարժանացավ:

44 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, թ. 14–15, նաև՝ ֆ. 1022, ց. 5, գ. 65, թ. 20:

45 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1022, ց. 5, գ. 65, թ. 19:

Արդ, ինչքանով են արդիական հայ կոմունիստների ներկայացրած տարածքային-սահմանային համեստ առաջարկները մեր ազգային-քաղաքական պահանջատիրության տեսակետից: Հարցադրմանը կարելի է պատասխանել՝ ասելով, որ նման համեստ պահանջ-առաջարկները ժամանակի ու հանգամանքների բարենպաստ փոփոխությունների պահին կարող են օրակարգային պահանջների հիմք դառնալ:

6. Մոսկվայի պայմանագրի բնույթը

1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովը: Խորհրդային Ռուսաստանը ներկայացնում էին արտգործող կոմ Գեորգի Չիչերինը (պատվիրականության ղեկավար) և ՌՍԴԽՀ Կենտգործկոմի անդամ Ջելալեդդին Կորքմազովը: Նախօրյակին Անգորայի գաղտնի խնդրանքով արտգործող կոմի տեղակալ, հայազգի Լև (Լևոն) Կարախանը հեռացվել էր բանակցային գործընթացից և նրա փոխարեն ընդգրկվել էր ժամանակին երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կազմակերպության հետ համագործակցած, ծունդով դադատանցի Ջ. Կորքմազովը⁴⁶: Իսկ թուրքական պատվիրակությունը, ինչպես արդեն ասվել է, ներկայացնում էին ԹԱՄԺ արտգործկոմիսարի տեղակալ Յուսուֆ Քեմալ բեյը (պատվիրականության ղեկավար), նախարար Ռիզա Նուր բեյը և ՌՍԴԽՀ-ում Թուրքիայի լիազոր դեսպան Ալի Ֆուադ փաշան (Ջեբեսոյը)՝ որպես պատվիրակության անդամներ: Խորհրդաժողովը բացվեց առանց Հայաստանի պատվիրակության մասնակցության, և դա այն դեպքում, երբ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական (Դրո-Լեգրան) համաձայնագրով Հայաստանը համարվում էր անկախ սոցիալիստական հանրապետություն⁴⁷, իսկ բանակցություններին բարձրացվելու էին Հայաստանի ու հայ ժողովրդի համար կենսական նշանակության տարածքային-սահմանային հարցեր:

Որպես խորհրդա-թուրքական 1-ին խորհրդաժողովի շարունակություն, 2-րդ խորհրդաժողովը բանակցությունների հիմք է ընդունում 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը: Հաշվի էին առնվելու նաև նախաստորագրումից հետո անցած յոթ ամիսների իրողություններն ու փոփոխությունները և դրանց համապատասխան՝ որոշ հողվածներում կատարվելու էին լրացումներ, հստակեցումներ, խմբագրական և այլ բնույթի շտկումներ:

Ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովի բանակցային աշխատանքները կազմակերպված ու համակարգված անցկացնելու համար ստեղծվել

46 Տե՛ս Գեոցիդ արմյան, (դոկ. և կոմ.), հատ. 2, մաս 1, էջ 423.

47 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 383:

էր երեք հանձնաժողով՝ քաղաքական, իրավական և խմբագրական⁴⁸: Բայց մինչև մարտի 9-ը գումարվել են ոչ թե պաշտոնական նիստեր, այլ տեղի են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ, քննարկումներ ու զրույցներ: Հետաքրքիր է, որ բանակցությունների բնույթն ու ձևաչափը որոշելիս կողմերը պայմանավորվել էին, որ առանձին որոշումներ, մասնավորապես ռազմա-ֆինանսական օգնության վերաբերյալ, պետք է մնան գաղտնի, չարտացոլվեն պայմանագրում, իսկ մյուսները պետք է ներառվեն պայմանագրի տեքստում⁴⁹: Մասնավորապես Գ. Չիչերինը դեռ 1920 թ. դեկտեմբերի 6-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված նամակով զգուշացնում էր, որ ռուս-թուրքական պայմանագրում չպետք է արտացոլվի իրենց ցուցաբերելիք օգնությունը Թուրքիային, որ դա Անտանտի ու հատկապես Անգլիայի հակազդեցությունը չառաջացնի⁵⁰:

Բացի դրանից՝ պարզաբանելով Մոսկվայում կնքվելիք պայմանագրի բնույթը տեսնում ենք, որ խորհրդային կողմը սկզբում թուրքերին առաջարկել է կնքել ոչ թե սոսկ «բարեկամության և եղբայրության» պայմանագիր, այլ երկկողմ **ռազմաքաղաքական դաշինք**: Դա պարզվում է այն բանից, որ մինչև խորհրդաժողովի բացումը Գ. Չիչերինը Վ. Ի. Լենինին հասցեագրած փետրվարի 22-ի նամակում դժգոհություն էր հայտնում, որ, առանց իր և արտգործոժողկոմատի գիտության, Վ. Լենինն ու Ի. Ստալինը նույնաբովանդակ ծածկագրեր են ուղարկել Բ. Մդիվանուն: Վերջինս էլ նամակագրություն է ունեցել Զ. Կարաբեքիրի հետ: Այդ ծածկագիր-նամակներից պարզվում է, որ խորհրդային կողմը Բ. Մդիվանու միջոցով **թուրքերին քաղաքական և ռազմական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկ է արել**, ինչից, սակայն, Գ. Չիչերինը տեղյակ չի եղել: Իսկ վերջինս թուրքերի հետ «**դաշինքը**» և Անգլիայի հետ նախապատրաստվող առևտրա-տնտեսական համաձայնագիրն⁵¹ անհամատեղելի էր համարում: Այստեղից դժվար չէ կռահել, որ Արևելք հեղափոխության «արտահանման» հույսով տարված խորհրդային պետության բարձրագույն ղեկավարությունն անգամ ցանկություն է ունեցել ռազմաքաղաքական դաշինք կնքելու այդ հեղափոխության «միջնաբերդը» դիտվող քենալական Թուրքիայի հետ, որը, սակայն, Գ. Չիչերինը կարողացել է կանխել:

Իսկապես, իրականությունն այն է, որ դեռ բանակցություն-զրույցների սկզբնափուլում թուրք պատվիրակները Գ. Չիչերինին տեղեկացրել են, որ իրենք լիազորված են Ռուսաստանի հետ կնքելու ռազմաքաղաքական դաշինք՝ հիմնվելով հենց Բ. Մդիվանուն ուղղված Լենինի և Ստալինի վե-

48 Տե՛ս Хейфец А. Н., Советская дипломатия и народы Востока (1921-1927), М., 1966, с. 110:

49 Տե՛ս Геноцид армян, (док. и ком.), հատ. 2, մաս 1, էջ 396:

50 Տե՛ս Геноцид армян, նույն տեղում, էջ 306:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 391: Առևտրա-տնտեսական այդ համաձայնագրի մասին խոսք կլինի Մոսկվայի պայմանագրի կնքման ստույգ օրվա կեղծման հարցի կապակցությամբ:

րը նշված ծածկագրերի վրա: Տեղեկանալով այդ մասին՝ դիվանագետ Չիչերինը անթույլատրելի էր համարում ռուս-թուրքական դաշինքի կնքումը, այլապես անգլո-թուրքական հնարավոր պատերազմի դեպքում Ռուսաստանը ստիպված պետք է լիներ պատերազմ հայտարարելու Անգլիային: Եվ այս կապակցությամբ Գ. Չիչերինը գրում է, որ ինքը ժամերով գրույցներ է ունեցել թուրք պատվիրակների հետ՝ համոզելու նրանց, որ ռուս-թուրքական պայմանագիրը ձևով և բովանդակությամբ լինի «բարեկամական-եղբայրական», բայց չունենա ռազմաքաղաքական դաշինքի նշանակություն⁵²: Արտգործոժողկոմ Գ. Չիչերինը, այս առիթով դժգոհ լինելով Թուրքիայում Ռուսաստանի դիվանագետների աշխատանքից և միաժամանակ հաշվի առնելով Արևելքում Թուրքիայի առանցքային դերը, հարց էր բարձրացնում, որ Անգորայից հետ կանչեն Ռուսաստանի դեսպանության առաջին քարտուղար Յա. Ուպմալին և լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանուն և նրանց փոխարեն այնտեղ դեսպան ուղարկեն այնպիսի անառարկելի հեղինակության, ինչպիսին Մ. Լիտվինովն է⁵³:

Մեկդարյա հեռավորությունից համեմատելով ռուս-թուրքական այն ժամանակվա հարաբերությունների բնույթը այսօրվա հարաբերությունների հետ, կարելի է եզրակացնել, որ եթե դրանք դաշնակցային էլ չեն, ապա միանգամայն լոյալ, անգամ բարեկամական են առևտրա-տնտեսական, էներգետիկ, ռազմատեխնիկական, զբոսաշրջային և այլ ոլորտներում սերտ փոխգործակցությամբ: Ավելին, ՌԴ-ն նույնիսկ հնարավորություն է տվել Թուրքիային գործնական ներկայություն ունենալու Հարավային Կովկասում:

7. Մուրմալուի գավառի ձակատագիրը

Մոսկվայի ռուս-թուրքական 20-օրյա պաշտոնական և ոչ պաշտոնական բանակցությունների գլխավոր խնդիրներից էին տարածքային-սահմանային հարցերը: Բուն պայմանագիրը բովանդակող առաջին երեք հոդվածները վերաբերել են թուրք-անդրկովկասյան, իսկ իրականում հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրների կարգավորմանը: Ինչպես արդեն ասել ենք, դրանց լուծման համար որպես սկզբունք ընդունվել էին օգոստոսի 24-ի նախաստորագրված ռուս-թուրքական պայմանագրի հոդվածներն ու թուրքական «Ազգային ուլստ»-ի պահանջները:

Խորհրդաժողովի արձանագրությունների և այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փետրվարի 26-ից, այսինքն՝ բացումից մինչև մարտի 9-ը ներառյալ, պաշտոնական նիստեր չեն գումարվել, այլ կողմերի

52 Տե՛ս նույն տեղում, էջ 392:

53 Տե՛ս Геноцид армян, (док. и ком.), հատ. 2, մաս 1, էջ 407.

միջև տեղի են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ, գրույցներ ամենատարբեր հարցերի շուրջ: Մինչ լիազումար նիստերը քննարկումների առանցքային հարցը համարվել է թուրքական «Ազգային ուխտ»-ի ճանաչումը, որից էլ բխելու էր տարածքային-սահմանային խնդիրների հստակեցումը և լուծումը: Ընդ որում, Գ. Չիչերինի խոստովանությամբ՝ կողմերի միջև տեղի են ունեցել անդրկուլիսյան բանակցություններ և, ըստ էության, կայացել է գործարք: Գ. Չիչերինի վկայությամբ քաղաքական հանձնաժողովի լիազումար նիստերը սկսվել են այն ժամանակ, երբ կողմերի միջև երկու շաբաթ առաջ արդեն ընթացել էին պաշտոնական բանակցություններ, այսինքն՝ մարտի 10-ից, և այդ ընթացքում տարածքային-սահմանային բոլոր գիշումները վճռահատվել էին ՌԿ(Բ)Կ ԿԿ համապատասխան որոշումներով և երկրի ղեկավար ընկերների աջակցությամբ⁵⁴:

Բայց դեռևս ռուս-թուրքական առաջին՝ 1920 թ. հուլիս-օգոստոսյան խորհրդաժողովում հավանության արժանացած թուրքական «Ազգային ուխտ»-ի սահմանա-տարածքային պահանջներից դուրս գոյություն ուներ մի հարց՝ Սուրմալուի գավառի ձակատագիրը: Հայտնի է, որ Սուրմալուի գավառը հայ ժողովրդի համար խորհրդանիշ հանդիսացող Մեծ ու Փոքր Մասիսներով, Իգդիրով ու Կողբով, Հայաստանի մի քանի բաժանումներից ի վեր, հանդիսացել է Արևելյան Հայաստանի օրգանական մասը և տևականորեն չի մտել Օսմանյան կայսրության մեջ, իսկ Հայաստանի անկախության հռչակումից հետո այն ՀՀ անբաժանելի մաս էր: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում, թեև Սուրմալուի ձակատը Դրոյի (Դրաստամատ Կանայան) հնուտ հրամանատարության շնորհիվ կարողացավ հաջողությամբ պաշտպանվել թուրքական զորքերի ներխուժումից, բայց, ի վերջո, Կարսի ձակատի անհաջողություններից և Կարս ամրոցի անկումից ու Ալեքսանդրապոլի գրավումից հետո հայկական զորքն ու խաղաղ բնակչությունը շրջապատման մեջ չընկնելու համար թողեցին Սուրմալուի գավառը և անցան Արաքս գետի ձախ ափը:

Սակայն, ինչպես հայտնի է, թուրքական «Ազգային ուխտ»-ի պահանջների մեջ էին ոչ միայն Կարսի ու Արդահանի գավառները, այլև Բաթումի երկրամասը Թուրքիային վերադարձնելը, այսինքն՝ ռուս-թուրքական 1877 թ. նախապատերազմյան սահմանի վերականգնումը: Քանի դեռ Վրաստանում իշխանության էին վրաց մենշևիկները, խորհրդային կառավարությունն առանձնապես մեծ մտահոգություն չէր ցուցաբերում Բաթումի հարցում: Բայց հենց որ 1921 թ. փետրվարի 25-ին 11-րդ Կարմիր բանակը մտավ Թիֆլիս, և Վրաստանը ևս հայտարարվեց խորհրդային, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը սկսեց մտահոգվել Կովկասի խոշորագույն

54 Տե՛ս **Саркисян Е. К.**, За кулисами, как родился Московский договор 1921 г., «Литературная Армения», Е., 1991, N 1, էջ 82:

ծովային դարպասի՝ Բաթումի ու նրա նավահանգստի, նաև նավթամուղի հետագա ձակատագրով: Այստեղ կատարվեց մի զարմանալի աճպարարական հնարք՝ տարածքների փոխանակություն, համաձայն որի՝ հայկական բնիկ Սուրմալու գավառը, որը թուրքական «Ազգային ուխտ»-ի տարածքային պահանջներից չէր, պետք է հանձնվեր Թուրքիային, իսկ դրա մոտավոր չափով Բաթումի երկրամասից տարածք՝ Բաթում քաղաքով ու նավահանգստով պետք է վերադարձվեր Խորհրդային Վրաստանին:

Հայտնի է, որ Վրաստանի խորհրդայնացման փուլում վրաց մենշևիկները նախընտրում էին, որ թուրքական գործը մտնի ու գրավի Բաթումը: Ի դեպ, բուն խորհրդաժողովի ընթացքում խորհրդային կողմի համար տեղի է ունենում անակնկալ իրադարձություն, այն է՝ մարտի 11-ին թուրքական զորամիավորումները մտնում են Բաթում պատճառաբանելով դա որպես «Ազգային ուխտ»-ով նախատեսված մարզը Թուրքիային կցելու քայլ⁵⁵: Բայց Խորհրդային կառավարության համար Վրաստանի խորհրդայնացումից հետո արդեն միանգամայն ավելորդ ու անգամ վտանգավոր էր դարձել թուրքերի ներկայությունը Բաթումում:

Եվ ահա, Մոսկվայի խորհրդաժողովում թուրքական «Ազգային ուխտ»-ի սահմանային որոշ ձգձգումների անվան տակ խորհրդային կողմը պահանջ դրեց, որ Բաթումն իր շրջակայքով և նրան սպասարկող խճուղին և երկաթուղին պատկանեն Վրաց. ՄԽՀ-ին⁵⁶: Դրա համար խնդիր դրվեց թուրքական գործը դուրս բերելու քաղաքից և շրջակայքից: Ինչպես հետո կհամոզվենք, այս ուղղումն ավելի շուտ վերածվեց տարածքային փոխանակության, այն է՝ «Ազգային ուխտ»-ի մաս կազմող Բաթումն իր շրջակայքով անցավ Խորհրդային Վրաստանին, իսկ ավելի ստույգ ՌՄԴԽՀ-ին, իսկ դրա փոխարեն «Ազգային ուխտ»-ի տարածքային շրջանակից դուրս գտնվող Սուրմալուի գավառը՝ Հայոց խորհրդանիշ առասպելական Մասիսներով, Կողբով ու Իգդիրով հանձնվեց Թուրքիային: Այսինքն՝ հայկական Սուրմալու գավառի հաշվին Վրաստանը փոխհատուցում ստացավ Բաթումն իր շրջակայքով: Արդյունքում տարածքային առումով Բաթումի մարզի 6254 քառ. վերստ տարածքի մոտ կեսն անցավ Վրաստանին, դրա դիմաց Թուրքիան ստացավ Սուրմալուի գավառը՝ 3174 քառ.

55 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии (документы и материалы), (1917–1921гг.), Тбилиси, 1958, էջ 702-703: Ի դեպ, թուրքերը Բաթումում մնացին ընդամենը մեկ շաբաթ: Այդ օրերին Ի. Ստալինը հեռագրում է Գ. Օրջոնիկիձեին, որ անհրաժեշտ է ուժեղ հարվածով թուրքերին դուրս բշել Բաթումից: Այդ նախաձեռնությունը իր վրա վերցրեց Կովկասյան ձակատի հրամանատարությունը՝ գործակցելով մենշևիկյան Վրաստանի գեներալ Մազնիաշվիլու հետ (Տե՛ս Геноцид армян, հատ. 2, մաս 1, էջ 468): Մարտի 18-ին 11-րդ կարմիր բանակի առաջապահ զորամասերը մտան Բաթում, և թուրքերը հեռացան քաղաքից: Ի դեպ, այդ նույն օրը մենշևիկների կառավարությունը (50-ից ավելի մարդ) իտալական շոգենավով, կառավարության փողերն առած, անցավ արտասահման (տե՛ս Борьба за победу..., էջ 708):

56 Տե՛ս Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 110, **Զոհրաբյան Է. Ա.**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, 1920-1922 թթ., Եր., 1979, էջ 226-227, նույնի Տարածքային-սահմանային հարցերը ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում (1921 թ. փետրվար-մարտ), «Լրաբեր» հաս. գիտ., 1989, N 2, էջ 9, տե՛ս նաև **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 443:

վերստ տարածքով⁵⁷: Այս փոխանակումը խորհրդային կողմը հիմնավորեց նրանով, որ Բաթումը Կովկասի խոշորագույն նավահանգիստն է՝ ծովային դարպասը, և կենսական նշանակություն ունի երկրամասի համար: Մի խոսքով, տեղի ունեցավ քաղաքական առևտուր բնիկ հայկական տարածքների հաշվին: Եվ այդ փոխանակության թրքանպաստ լուծման համար մարտի 9-ին և 10-ին իրենց ցուցում-հրահանգներով խնդրին միջամտել են Վ. Լենինը և Ի. Ստալինը: Ի վերջո, նրանց միջամտությամբ վերջնականորեն համաձայնեցվում է Սուրմալու-Բաթում տարածքային փոխանակությունը և հստակեցվում է ամբողջ սահմանագիծը: Բաթումի հատվածում սահմանագիծը սկիզբ էր առնելու Սև ծովի ափին գտնվող Սարպ բնակավայրից և անցնելու էր հարավ-արևելք մինչև Խեդիս Մթա լեռը, իսկ այդտեղից դեպի արևելք՝ Շավշեթի լեռնաշղթա և այլն: Այսինքն՝ Բաթումի երկրամասը բաժանվում էր մոտ երկու հավասար մասի. հարավը՝ թուրքերին, իսկ հյուսիսը՝ վրացիներին:

Հարց կարող է ծագել. այդ ինչպե՞ս պատահեց, որ թուրքերը, այնուամենայնիվ, իրենց «Ազգային ուխտ»-ը խախտող նման «զիջում» արեցին: Դա հավանաբար պետք է բացատրել նրանով, որ Բաթումը Սուրմալուի հետ փոխանակելով՝ թուրքերը ոչ միայն տարածքային կորուստ չունեցան, այլև հնարավորություն ստացան մոտենալու Նախիջևանի սահմանին, իսկ քիչ անց Իրանի հետ տարածքային փոխանակման միջոցով ուղղակի կապ ապահովելու վերջինիս հետ:

Այսպիսով՝ բանակցությունների հիմք ընդունելով թուրքական «Ազգային ուխտ»-ը և օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական բարեկամության պայմանագրի նախագիծը՝ Ռուսաստանն ու Թուրքիան Գ. Չիչերինի և Յու. Քեմալի փոխադարձ համաձայնությամբ ավելի կոնկրետացրին կողմերի հավակնությունները: Տվյալ դեպքում այդ կոնկրետացման արտահայտությունը եղավ այն, որ Բաթումի մարզը ստանալու դիմաց խորհրդային կողմը Սուրմալուի գավառը հանձնեց Թուրքիային: Ահա այսպես լուծվեց Սուրմալուի գավառի և հայոց խորհրդանիշ Արարատի ճակատագիրը՝ առանց դրա իրական տեր ու կրող հայ ժողովրդի կամքը հարցնելու:

8. Նախիջևանի հարցը

Ոչ պակաս բարդ քննարկումներ են ընթացել Նախիջևանի երկրամասի հետագա պատկանելության շուրջ: Արարատյան նահանգի օրգանական մասը կազմող այդ երկրամասն ընկած էր Արաքսի ձախ ափին և որևէ կապ

57 Տե՛ս **Завриев Д.**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 69-70.

չուներ թուրքական «Ազգային ուխտ»-ի պահանջների հետ, չնայած որ 1920 թ. աշնանը թուրքական զորքերն այն ռազմակալել էին: Մոսկվայի խորհրդրդաժողովի քաղաքական հարցերով հանձնաժողովի մարտի 10-ի նիստին քննարկվել են Նախիջևանի կարգավիճակի և սահմանների հարցերը: Թուրքական կողմը Նախիջևանի երկրամասում իր ներկայությունը բացատրում էր նրանով, որ տեղի մուսուլման բնակչությունն է հրավիրել թուրքական զորքերին, և նա գտնվում է Թուրքիայի հովանավորության ներքո:

Խորհրդային Ռուսաստանում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բեյբուր Շահթախթինսկին, որ, ի տարբերություն հայ պատվիրակների, մշտապես ակտիվ շփումների մեջ է եղել թուրք պատվիրակների ու Գ. Չիչերինի հետ, համարում էր, որ Նախիջևանի երկրամասը պետք է դուրս բերել Թուրքիայի խնամակալությունից և դարձնել ինքնակառավարվող մարզ՝ Խորհրդային Ռուսաստանի հովանավորությամբ, մինչև խնդրի վերջնական լուծումը⁵⁸: Ի. Ստալինը, Բ. Շահթախթինսկու հետ համակարծիք, Չիչերինին հասցեագրած մարտի 6-ի պաշտոնական նամակ-գրությունում, իր հերթին, ցուցում էր տալիս, որ Նախիջևանի հարցի շուրջ վերջին խոսքը տրվելու է Ադրբեջանի ներկայացուցչին⁵⁹: Դա նշանակում էր, որ խորհրդային կողմը պատրաստակամ էր Նախիջևանը հանձնելու Ադրբեջանին՝ հավանաբար այդ հարցում թուրքերի համակրանքը շահելու համար: Կարելի է ասել, որ Ի. Ստալինի այս հրահանգն է դարձել խորհրդային պատվիրակության գործողությունների ու հնարավոր զիջումների ուղեցույցը:

Սակայն քննարկումների սկզբնական փուլում մարտի առաջին տասնօրյակի ոչ պաշտոնական բանակցությունների ժամանակ, խորհրդային կողմը չկարողացավ անվերապահ անցկացնել անգամ այդ տարբերակը և ի վերջո համաձայնեց թուրքերի ներկայացրած պահանջին, որն էլ հետագայում արտացոլվեց պայմանագրի 3-րդ հոդվածում: Այսինքն՝ Նախիջևանի կարգավիճակի և սահմանների հարցերում կողմերի միջև եղել է որոշ տարակարծություն, բայց բնավ ո՛չ Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի օգտին:

Մոսկովյան բանակցությունների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հենց խորհրդային կողմն է նախաձեռնել, որ Նախիջևանն անցնի Ադրբեջանի հովանավորության ներքո: Այդ քայլի նպատակն էր երկրամասը դուրս բերել Թուրքիայի ազդեցությունից և որպես հարցի փոխզիջումային լուծում հանձնել Թուրքիայի ցեղակից Ադրբեջանի հովանավորությանը: Եվ դա այն դեպքում, երբ Նախիջևանը որևէ կապ չուներ

58 St и Геноцид армян, (документы и комментарии), հատ. 2, մաս 1, էջ 390:

59 St и Нагорный Карабах, (док. и ком.), հատ. 1, М., 2008, էջ 619:

թուրքական «Ազգային ուխտ»-ի պահանջների հետ, իսկ թուրքերի կողմից դրա ռազմակալման հիմնավորումը, ինչպես արդեն ասվեց, եղել է այն, որ մուսուլմաններն են իրենց հրավիրել այդ երկրամաս:

Բայց և այնպես, բուն պայմանագրի 3-րդ հոդվածն իր ձևակերպմամբ տեղ թողեց Նախիջևանի հարցին թուրքերի միջամտության համար. կտրուկ պայման էր դրվում, որ «Ադրբեջանի հովանու տակ անցնող Նախիջևանի ինքնավար մարզի հովանավորությունը չի զիջվի մի երրորդ պետության»⁶⁰: Հասկանալի է, որ երրորդ պետություն ասելով նկատի էր առնվում Հայաստանը: Առաջ անցնելով նշենք, որ չնայած հետագայում, Մոսկվայի պայմանագրի նմանակը հանդիսացող Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի թուրք-անդրկովկասյան պայմանագրի Նախիջևանին վերաբերող 5-րդ հոդվածում այլևս չկա հիշեցում Նախիջևանի մարզը երրորդ պետությանը չհանձնելու վերաբերյալ, որի շնորհիվ, ի դեպ, մեզանում որոշակի հույսեր ու պատրանքներ էին առաջացել, բայց արդեն 1923 թվականին Նախիջևանի մարզը ինքնավար հանրապետության կարգավիճակով Ադրբեջանի հովանավորության տակ անցնելու պայմանագրային պահանջն այդպես էլ մնաց անփոփոխ:

Եթե հավատանք թուրք պատմաբան Թևֆիկ Բիյիքլիօղլուին, ապա խորհրդային պատվիրակությունն է առաջարկել, որ Ադրբեջանի հովանավորության ներքո ստեղծվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը⁶¹: Իբրև խնդրի լուծում թուրքական կողմը համաձայնել է այդ հովանավորությունը զիջելու Ադրբեջանին՝ պայմանով, որ հետագայում դա չփոխանցվի մի երրորդ պետության: Մուսուլմանների հովանավորի դերում հանդես եկող թուրքական պատվիրակությունն իր կողմից նվիրատվություն էր համարում Նախիջևանը Ադրբեջանին զիջելը: Սակայն ռուսական պատվիրակությունն առարկել է այն մասով, որ չի կարող ընդունել թուրքերի այն ձևակերպումը, թե «Թուրքիան զիջում է հովանավորության իր իրավունքը» նախ այն պատճառով, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել և երկրորդ, թե իբր՝ «Նախիջևանի բնակչությունն է կանչել թուրքական գործին»: Դա նույնպես իրավական արժանահավատություն չի ներշնչում հիմք ծառայելու նման հովանավորության համար: Իր հերթին թուրքական կողմը զգուշացրել էր, որ եթե այդ տարածքում մահմեդականների կոտորած լինի, ապա թուրքական գործերին դժվար կլինի պահպանել չեզոքությունը⁶²: Եվ սա ասում էր մի երկրի պատվիրակություն, որի հին ու նոր կառավարության գործունեության հետևանքով 1915-1916 թթ. իրականացվել էր 1.5 մլն արևմտահայերի Եղեռնը, իսկ 1918-1920 թթ. կոտորվել

60 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12, «Հայաստանը...», էջ 501:

61 Տես «Երեկոյան Երևան», 9 հունիսի 1988:

62 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 60: Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. Մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր), Եր., 2001, էջ 51:

էր ավելի քան 200 հազար արևելահայ: Ի դեպ, Նախիջևանում մուսուլմանների կոտորածի վերաբերյալ թուրքերի հայտարարությանը ռուսական պատվիրակությունը հակադարձել է՝ հիշեցնելով Կարսում ոչ մուսուլման բնակչության կոտորածի մասին⁶³:

Ի վերջո, կողմերը համաձայնում են հետևյալ ձևակերպմանը, որ «Նախիջևանը հանձնվում է Ադրբեջանի խնամակալությանը պայմանով, որ Ադրբեջանը այդ հովանավորությունը չի գիջի մի երրորդ պետության»⁶⁴: Կողմերը սկզբունքորեն համաձայնվում են այդ մասին առանձին կետով ամրագրել պայմանագրի 3-րդ հոդվածում արձանագրելով, որ պայմանագրի այդ հոդվածի որևէ խախտում կհամարվի ամբողջ պայմանագրի խախտում: Կարելի է ասել, որ խորհրդային պատվիրակությունն առանձնապես կարևորություն չի տվել, թե Նախիջևանն ում կազմում կլինի՝ Ադրբեջանի⁶⁵, թե՞ Հայաստանի:

Անգամ Նախիջևանի սահմանները ճշգրտելիս թուրք ռազմական փորձագետները իրենց գավթիչ ախորժակին հագուրդ տալու համար Նախիջևանի մարզին էին միացրել ոչ միայն Շարուր-Գարալագյազի գավառի մի հատվածը, այլև Երևանի նախկին գավառի մի մասը՝ մինչև Արարատ կայարանը, այսինքն՝ Երևանի գավառի հարավային եռանկյունի հողակտորը: Մինչդեռ Նախիջևանի առավելագույն սահմանը պետք է լիներ Գայլի դրունքը: Ադրբեջանը երբեք, անգամ մուսավաթականների օրոք չի հավակնել իր հովանավորության տակ առնելու Երևանի գավառի ինչ-որ մաս և մշտապես իր ծայրագույն սահմանն է համարել Գայլի դրունքը:

Ասվածը ցույց է տալիս, որ եթե Մոսկվայի բնակչություններում խորհրդային պատվիրակությունը բավարար ցանկություն և հետևողականություն դրսևորեր, ապա հնարավոր էր Նախիջևանի երկրամասի խնդրին միանգամայն այլ՝ հայանպաստ լուծում տալ: Թուրքերը բավարար հիմքեր չունեին այս հարցի ադրբեջանապաստ լուծման համար (տեղի բնակչության հրավերը իրավական հիմք չէր), որովհետև Արևելյան Հայաստանի օրգանական մասը կազմող Նախիջևանի երկրամասը չէր համարվում թուրքական «Ազգային ուխտ»-ի մաս, ինչպես որ դրա մաս չէր կազմում Սուրմալուի գավառը, որը ևս խլվեց Հայաստանից:

Այսպիսով՝ **պատմական ճշմարտությունն այն է, որ խորհրդային կողմն ինքն է առաջինն առաջարկել, որ Նախիջևանի հովանավորությունը հանձնվի Ադրբեջանին, որին և որոշ պայման դնելով՝ համաձայնել են թուրքերը:** Մոսկվայի պայմանագրով Նախիջևանի երկրամասի հանձնումը Ադրբեջանին, Հայաստանի համար տարածքային զգալի կորուստ (5500 քառ. կմ) լինելուց բացի, վնասակար էր նաև ռազմավարա-

63 Ств и Геоцид армян, (документы и комментарии), հատ. 2, մաս 1, էջ 429.

64 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 60:

կան տեսակետից: Դրանով փաստորեն Հայաստանի թիկունքում Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ, որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև և գործուն սպառնալիք՝ Զանգեզուրի ու Արցախի համար:

Անցած 100 տարիների հեռվից անդրադարձ կատարելով Նախիջևանի ճակատագրին՝ պետք է ասել, որ Խորհրդային Ռուսաստանը և նրա ներկայիս իրավահաջորդ ՌԴ-ն որևէ հայտարարություն կամ անգամ ակնարկ չեն արել Նախիջևանի հիմնահարցի և առհասարակ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի վերանայման վերաբերյալ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Արցախյան վերջին՝ ձախողված պատերազմը ցույց տվեց, որ նա ինքնուրույն կերպով ի վիճակի չէ նման հարց բարձրացնելու: Ավելին, ներկայումս ևս Նախիջևանի երկրամասը թուրք-ադրբեջանական տանդեմի համար շարունակում է մնալ որպես ռազմավարական միջանցք պանթյուրքական նկրտումների համար:

Այսպիսով՝ տարածքային-սահմանային որոշ ոչ էական փոփոխություններով ու խմբագրական, ոճական շտկումներով 1921 թ. մարտի 16-ին, ժամը 23-ին, չորեքշաբթի, (այդպես է նշված պայմանագրում և խորհրդածոդովի մարտի 16-ի լիազումար նիստի ֆրանսերեն արձանագրության տեքստում⁶⁵) ստորագրված պայմանագիրը վերահաստատեց թուրքական «Ազգային ուխտ»-ի տարածքային պահանջները, նույնիսկ ավելին՝ Հայաստանի հողերի հաշվին նոր զիջումներ կորզեց հօգուտ Վրաստանի ու Ադրբեջանի:

9. Պայմանագրի կնքման ստույգ օրվա կեղծումը

Վերջին տարիներին գաղտնազերծված արխիվային վավերագրերի ուսումնասիրությամբ բացահայտվել է Մոսկվայի պայմանագրին առնչվող ուշագրավ մի կեղծիք (ֆեյք): Պարզվում է, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, ինչպես որ նշված է պայմանագրի տեքստում և այլ ժողովածուներում, այլ իրականում երկու օր ուշ՝ մարտի 18-ին: Ինչո՞վ բացատրել միջազգային դիվանագիտությանը ոչ այնքան բնորոշ նման կեղծիքը:

Վավերագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրման ամսաթվի փոփոխությունն ուղղակի կապ ունի այդ նույն օրերին Լոնդոնում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև (Լ. Կրասին - Ռ. Հոռն) ստորագրված առևտրա-տնտեսական համաձայնագրի հետ: Հայտնի է, որ ռուս-անգլիական շուրջ մեկ տարի տևած

65 Տե՛ս ՈԱՔԱ, ֆ. 04, ց. 33, թղթ. 232, գ. 52998, թ. 85:

բանակցություններից հետո՝ 1921 թ. մարտի 16-ին, Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեոնիդ Կրասիսիևի և Մեծ Բրիտանիայի առևտրի նախարար Ռոբերտ Հոռնի միջև ստորագրվել է առևտրա-տնտեսական համաձայնագիր, որն ունեցել է նաև քաղաքական ենթատեքստ:

Բանն այն է, որ դրանով Ռուսաստանը պարտավորվում էր հակաբրիտանական որևէ քարոզչություն չվարել Հնդկաստանում, Աֆղանստանում, Իրանում և Մերձավոր Արևելքում: Նույն կերպ Մեծ Բրիտանիան պարտավորվում էր հակառուսական քարոզչություն չտանել նախկին Ռուսական կայսրության երկրներում⁶⁶: Քաղաքական երկկողմանի պարտավորություն ներկայացնող այդ պահանջը ներառվեց ռուս-անգլիական առևտրական համաձայնագրի պրեամբուլա⁶⁷: Այդ պայմանի ընդունումը նշանակում էր, որ Մեծ Բրիտանիան չէր կարող որևէ օգնություն ցույց տալ Կովկասի վտարանդի կառավարություններին: Համաձայնագրի կնքումը միաժամանակ նշանակում էր, որ Անգլիան դե ֆակտո (փաստացի) ճանաչում է ՌՍԴԽՀ-ն:

Սակայն բոլշևիկների հետ համաձայնագրի կնքման պատճառով լիբերալ վարչապետ Դ. Լյոյդ-Ջորջին դեմ հանդես եկան պահպանողական նախարարներ Ու. Չերչիլը և Դ. Քերզոնը: Վերջիններս Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքելու մի քանի նախապայման էին առաջադրել: Դրանցից մեկն էլ նա էր, որ Ռուսաստանը վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ և վերջինիս օգտին Թուրքիայից տարածքային որոշ զիջումներ պահանջի:

Եվ որպեսզի անգլիացիներին մոլորության մեջ գցեն, թեև Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ուշացումով՝ մարտի 18-ին, բայց փաստաթղթի վրա նշվել է մարտի 16-ը: Այդ հնարքի նպատակն էր, որ անգլիական կառավարությանը ցույց տան, թե հայերի համար ոչ նպաստավոր ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է անգլո-խորհրդային համաձայնագրից առաջ, և որ իբր ռուսական կողմը տեղյակ չի եղել անգլո-ռուսական բանակցություններից, որ Կարսը և Արդահանը Հայաստանին վերադարձնելու պահանջ դնեն:

Գ. Չիչերինի՝ Վ. Լենինին հասցեագրած մարտի 17-ի նամակից տեղեկանում ենք, որ Մոսկվայի պայմանագիրը դեռևս ստորագրված չի եղել: Նամակագիրը հայտնում էր, որ երկար բանավեճից հետո թուրքերը համաձայն են ստորագրելու պայմանագիրը հետևյալ պայմանով. մենք պետք է գրավոր խոստում տանք, որ մի քանի տարի շարունակ տարեկան 10 մլն ռուբլի դրամական օգնություն ցույց կտանք Թուրքիայի տնտեսության վերականգնման համար, որպեսզի Անգլիան այն չդիտարկի իբրև իր դեմ

66 Տե՛ս «Известия», Москва, 22 марта 1921.

67 Տե՛ս ДВП СССР, вып. 3, М., 1959, էջ 608:

ուղղված թշնամական ակտ: Ըստ Չիչերինի՝ «Ամեն ինչ պատրաստ է ստորագրման համար: Պայմանագիրը կստորագրենք վաղը (18-ի) երեկոյան: Սակայն մինչ ստորագրելը նրանք պետք է ինձանից ստանան գրավոր թուղթ՝ տարեկան 10 մլն ռուբլի (ոսկով) հատկացնելու վերաբերյալ: Ես կողմնակից եմ նման գրություն տալուն: Այս գումարը երաշխիք է, որ Բաթումը կվերադարձվի մեզ: Ինձ հարկավոր է այսօր՝ մինչև երեկոյան ժամը 6-ը, ստանամ պատասխանը, որպեսզի հասցնեմ թուղթ գրել, և չուշացնենք ստորագրումը: Պայմանագիրը կթվագրվի 16-ի ամսաթվով, երբ մենք դեռ չգիտեինք Անգլիայի հետ Լ. Կրասինի ստորագրած պայմանագրի մասին»⁶⁸: Հաջորդ օրը՝ մարտի 18-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղբյուրոն լսում է Գ. Չիչերինի՝ թուրքերին նման պարտավորագիր տալու հարցը և որոշում համաձայնել նրա կարծիքին⁶⁹: Ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է քաղբյուրոյի որոշումից հետո՝ նույն օրը, մարտի 18-ի երեկոյան, որից հետո թուրքական պատվիրակության պատվին տրվել է «հանդիսավոր ընթրիք»:

Ժամանակին այս փաստը բացահայտած պատմաբան Ռ. Ղազանչյանից հետո իրավաբան-միջազգայնագետ, պրոֆ. Յու. Բարսեղովը ՌՄԴԽՀ արտաքին գործերի նախարարության և Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության գաղտնագրերով արխիվային ֆոնդերից դուրս բերված նորահայտ փաստաթղթերով ու նյութերով լույս է սփռել ռուս-թուրքական մոսկովյան պայմանագրի ձգձգման պատճառների վրա: Բայց պարզվում է, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրման հետաձգման պատճառը եղել է ոչ միայն և ոչ այնքան Ռուսաստանից դրամական օգնություն ստանալու հարցը, որքան լոնդոնյան բանակցություններում Մեծ Բրիտանիայի դրած պահանջը՝ Հայաստանի օգտին տարածքային որոշ գիջումներ կատարելու վերաբերյալ⁷⁰:

Դրանից հետո Գ. Չիչերինը Լոնդոն Լ. Կրասինին հասցեագրած գաղտնի հեռագրում տալիս էր հետևյալ հրահանգը. «Եթե անգլիացիները դժգոհություն հայտնեն մոսկովյան պայմանագրի վերաբերյալ, ապա դուք բացատրություն կտաք, որ պայմանագիրը ստորագրվել է համաձայնագրի ստորագրման օրը, և որ իբր Մոսկվան չէր սպասում, թե անգլո-խորհրդային բանակցությունները այդքան շուտ կավարտվեն, և որ Մոսկվայի պայմանագրի գլխավոր բովանդակությունը տարածքային սահմանագծումն է, ինչը կապ չունի մեր և Անգլիայի համաձայնագրի հետ: Անգլիան չի կարող մեզանից պահանջել, որ մենք հետ վերցնենք **Կարսը** և **Արդահանը** (ընդգծումը մերն է – Ա. Հ.) Թուրքիային գիջելու պահանջը, հակառակ դեպքում մենք պատերազմ կսկսենք Թուրքիայի դեմ»⁷¹: Հայտնի է, որ Անտանտի երկրների Լոնդոնի (1921թ. փետրվար-մարտ) խորհրդածողովում Անգլիայի արտգործնախարար

68 Казанджян Р., т. 2, ч. 2, с. 428.

69 Տե՛ս Գեոցիդ армян, (документы и комментарии), հատ. 2, մաս 1, էջ 467.

70 Տե՛ս Գեոցիդ армян, (документы и комментарии), հատ. 2, մաս 1, էջ 465-466, հատ. 2, մաս 2, էջ 428.

71 Գեոցիդ армян, (документы и комментарии), т. 2, ч. 2, с. 428. Տե՛ս նաև՝ ДВП СССР, т. 46 М., 1960, էջ 11:

լորդ Դ. Քերզոնը Անգորայի կառավարության պատվիրակ Բեքիր Սամի բեյին փետրվարի 26-ին առաջարկել էր, որ Թուրքիան համաձայնի Հայաստանին հանձնելու հայկական մի քանի տարածք, մասնավորապես Կարսի և Արդահանի մերձակա մի քանի շրջան⁷²: Եվ Լորդ Քերզոնի այդ պահանջին կարծես Բեքիր Սամին չէր առարկել:

Ինչպես արդեն ասվեց, այդ նույն օրերին ընթացող անգլո-ռուսական լոնդոնյան բանակցություններին անգլիական կողմը ռուսներին (ղեկ. Լ. Կրասին) առաջարկել էր թուրքերից պահանջել Կարսը և Արդահանը՝ Հայաստանին հանձնելու նպատակով: Բայց քանի որ ՌՄԴԽՀ կառավարությունը սկզբունքորեն ընդունել էր թուրքական «Ազգային ուխտ»-ը, ուստի նա փորձ չարեց պահանջելու Կարսի և Արդահանի շրջանների վերադարձը Հայաստանին: Դրա համար էլ կողմերը փոխադարձ համաձայնությամբ դիմել են դիվանագիտական աճապարարության՝ մարտի 18-ին ստորագրված պայմանագիրը թվագրել են երկու օր շուտ՝ մարտի 16-ով՝ դրանով իսկ մոլորության մեջ գցելով անգլիացիներին և համաշխարհային հանրությանը:

Որ ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագիրը մինչև մարտի 18-ը ստորագրված չի եղել, պարզվում է Մոսկվայում գտնվող, սակայն կոնֆերանսին չնասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի՝ նույն օրը Մոսկվայից Բաքու Միք. Աթաբեկյանին հասցեագրած նամակից: Այդ նամակում նա ոչ միայն Մոսկվայի պայմանագրի ստորագրման մասին որևէ հիշատակում չի անում, այլև առանձնապես լավատեսություն չի հայտնում, թե այն առաջիկայում կստորագրվի⁷³:

Ինչպես տեսնում ենք, Մոսկվայի պայմանագրի ստորագրման հետաձգման պատճառներից մեկը ռուսներից օգնություն ստանալու թուրքերի ցանկությունն էր, իսկ մյուսը՝ անգլիացիներին մոլորության մեջ գցելը: Ըստ այդմ՝ մարտի 18-ին ստորագրված պայմանագիրը թվագրվել է մարտի 16՝ ցույց տալու համար, թե իբր դա ստորագրվել է Լոնդոնի անգլո-ռուսական համաձայնագրի հետ գրեթե միաժամանակ, և Մոսկվան իբր տեղյակ չի եղել այդ համաձայնագրի բովանդակությանը, որպեսզի Կարսը և Արդահանը Հայաստանին վերադարձնելու պահանջ ներկայացնեն:

Ամփոփելով մեկդարյա հնություն ունեցող ռուս-թուրքական մոսկովյան պայմանագրի ստորագրման հետ կապված այս դրվագը՝ փաստենք, որ կեղծվել է անգամ միջազգային իրավական փաստաթուղթ հանդիսացող պայմանագրի ստորագրման ստույգ օրը, որպեսզի Հայաստանին ու հայ ժողովրդին իր պատմական եզերքներից որևէ մաս չփոխանցվի: Սա կարելի է դիտարկել որպես բացառիկ մի երևույթ՝ միջազգային պայմա-

72 Տե՛ս Դեոցիդ արյան, (документы и комментарии), հատ. 1, էջ 644.

73 Տե՛ս ՀԱՍ, ֆ.114, ց. 2, գ. 68, թ. 26:

նագրային իրավունքում, և, ըստ ամենայնի, նման ստոր քայլի նախաձեռնողները եղել են բոլշևիկները:

10. Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի հայ-թուրքական պայմանագրի և Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի համեմատությունը

Հայ պատմագրության վիճահարույց հարցերից է Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի փոխկապակցվածության հարցը, ինչը պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝ **իրավական և տարածքային**:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը փաստացի (de facto) կնքվել է, սակայն չի ունեցել իրավական ուժ մի քանի պատճառներով. ա) խաղաղ հեղաշրջման ու իշխանափոխության հետևանքով Հայաստանի պատվիրակության ստորագրությունն այլևս իրավական ուժ չի ունեցել, բ) պայմանագիրը չի վավերացվել Հայաստանի արդեն գոյություն չունեցող խորհրդարանի կողմից և գ) պայմանագիրը ստորագրվել է հակառակորդի բռնի ուժի, անգամ ֆիզիկական սպառնալիքի տակ: Բացի նրանից, որ հոգեբանորեն ճնշելու նպատակով ստորագրման օրը ամրոցի պատուհանից ի ցույց է դրվել կախաղան բարձրացված մի քանի մարմին, Ք. Կարաբեքիրը պարզ հասկացրել է հայ պատվիրակներին, որ նրանք չեն կարող հեռանալ՝ առանց իր պահանջած ստորագրությունը տալու⁷⁴: Ինչ վերաբերում է թուրքական կողմին, ապա ա) Ք. Կարաբեքիր փաշայի ներկայացրած կառավարությունը միջազգայնորեն չճանաչված ու ապօրինի է եղել, անգամ այն գլխավորող Մ. Քեմալ փաշային Օսմանյան օրինական կառավարությունը համարել է հանցագործ և դատարանի վճռով մահվան դատապարտել, բ) Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել թուրքական մեջլիսի կողմից և գ) ուժով ու սպառնալիքով ստորագրված պայմանագիրը միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից չէր կարող ունենալ իրավական ուժ, ուստիև միջազգային ճանաչում:

ՌՄԳԽՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինը 1921 թ. ապրիլի 8-ին հղած հայտագրով իրազեկել է Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Հայաստանի խորհրդային կառավարությունը, և որ այն վավերացված չէ: Բացի դրանից, ըստ պայմանագրի տեքստի, այն գործողության մեջ կարող էր դրվել մեկ անս-

74 Տե՛ս Արծրունի Վ., Հայ-Տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Եր., 2002, էջ 320:

վա ընթացքում կողմերի օրենսդիր մարմինների հաստատելուց հետո, որը նույնպես արված չէ⁷⁵:

Մյուս կողմից խորհրդային պատմագրության մեջ և նույնիսկ հետխորհրդային մի շարք հեղինակների աշխատություններում կար թյուրըմբռնում, թե իբր՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազ. քառ. կմ տարածք, որը հավասարվում էր Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքին⁷⁶, ինչը չի համապատասխանում իրականությանը: Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանների տեղանշումները համեմատելիս կարելի է համոզվել, որ տարածքային-սահմանային տեսակետից Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չի զիջել Մոսկվայի, իսկ ավելի ուշ՝ դրա նմանակ Կարսի պայմանագրին: Այսպես, եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով սահմանը Կարսի մարզի հատվածում անցել է Թիխնիս, Մեծ Ղմլու և Ղըզըլդաշ գյուղերից դեպի արևմուտք, այսինքն՝ այս բնակավայրերը իրենց շրջակա տարածքներով ներառվել են Հայաստանի կազմ, ապա Մոսկվայի պայմանագրով, ընդհակառակը, հայ-թուրքական սահմանագիծն անցել է այդ գյուղերից արևելք, այսինքն՝ դրանք թողնվել են Թուրքիայի կազմում: Ճանաչված պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանի քարտեզագիտական դիտարկումներով ու կատարած մոտավոր հաշվումներով Մոսկվայի պայմանագրով, ի տարբերություն Ալեքսանդրապոլի, Թուրքիային է անցել 250 քառ. կմ տարածք⁷⁷: Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին էր անցնում Կարսի մարզի հյուսիս-արևելյան շրջանից 600 քառ. կմ տարածք: Իսկ Մոսկվայի պայմանագրով շուրջ 250 քառ. կմ եռանկյունի մի հողատարածք խորհրդային սահմանագծող ու քարտեզագրող կողմի անփութության և անհետևողականության հետևանքով կրկին անցել է Թուրքիային, այսինքն՝ Մոսկվայի պայմանագրով Կարսի մարզից Հայաստանին թողնվել է ընդամենը 350 քառ. կմ, որն էլ կազմում է Աղբաբայի ներկայիս Ամասիայի ենթաշրջանը⁷⁸:

Սույն փաստն արձանագրելով՝ բնավ նպատակ չունենք արդարացնելու կամ պաշտպանության տակ առնելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը: **Այստեղ պատմագիտական կեղծիքն այն է, որ եթե չկնքվեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապա չէին լինի Մոսկվայի պայմանագ-**

75 Տե՛ս **Սահակյան Տ.**, Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 350:

76 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատ. 7, Եր., 1967, էջ 111, **Արզումանյան Մ. Վ.**, Ղարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 349, Հայկական համառոտ հանրագիտարան, հատ. 1, Եր., 1990, էջ 83, **Պալոյան Պ. Ա.**, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), էջ 376, «Ազատամտություն», 14. 10. 2009 և ուրիշներ:

77 Տե՛ս **Հարությունյան Բ.**, Երկու ճշգրտում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Եր., 2001, էջ 78):

78 Այդ մասին քարտեզագրական սահմանագծման պատկերներով տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հատ. Բ., Եր., 2008, էջ 210-215:

րի՝ Հայաստանին վերաբերող ծանր պայմանները: Այնինչ, Մոսկվայի խորհրդատու ընթացքում որևէ հիշատակում չի եղել Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին: Էլ չենք խոսում բացահայտ կեղծիք համարվող այն մտամարզանքի մասին, թե իբր Մոսկվայի պայմանագրով չեղյալ համարվեց Ալեքսանդրապոլինը: Ինքնին հասկանալի է, որ այս և նման պատմական իրողությունների հետ աղերս չունեցող մաքսանենգ հայտարարությունները նախկինում օգտագործվել են որպես զենք ՀՅ Դաշնակցության դեմ մղվող քարոզչական պայքարում:

11. Մոսկվայի պայմանագրի ամփոփիչ տվյալները

Մինչ Մոսկվայի պայմանագրով տարածքային-սահմանային հարցերի վերաբերյալ ամփոփիչ թվային և այլ արդյունքներն արձանագրելը՝ փաստենք, որ Մոսկվայի ռուս-թուրքական 16 հոդվածանոց պայմանագրի միայն առաջին երեք հոդվածներն են անմիջականորեն վերաբերել տարածքային խնդիրներին: Մնացած հոդվածները հիմնականում ներառել են երկու «բարեկամ» երկրների հարաբերություններին առնչվող՝ Թուրքիայի վրա նախկինում դրված կապիտուլյացիաների ռեժիմի վերացման, երկկողմ հաղորդակցության ապահովման, մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումների, մուտքի և ելքի, երկու կողմերի քաղաքացիների ընտանեկան իրավունքի, նրանց ունեցվածքի ազատ վաճառքի, երկկողմ զինվորական և քաղաքացիական գերիների «բոլորը բոլորի դիմաց» վերադարձի, հյուպատոսական կոնվենցիայի և միջպետական հարաբերությունները կարգավորող այլ անհրաժեշտ համաձայնագրերի կնքման խնդիրներին և այլն⁷⁹:

Նշված հոդվածախմբերից իր արդիական հնչեղությամբ մեզ հետաքրքրում է Հայաստանին ու հայերին առնչվող 13-րդ հոդվածը, որն արտոնում էր երկու կողմի տարածքներում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերիների վերադարձը: Բանն այն է, որ 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմի հետևանքով, բացի հազարավոր հայերի գերի ընկնելուց, նաև՝ Հայաստանի ռազմակալված շրջաններից տասնյակ հազարավոր երիտասարդ և աշխատունակ մարդիկ՝ որպես էժան աշխատուժ, ձմեռվա սառնամանիքին կիսամերկ քշվել էին Կարին, Երզնկա և այլուր՝ ստրկական աշխատանքի⁸⁰: Եվ վերջում, իրավական տեսակետից Մոսկվայի պայմանագրի առավել հիշարժան հոդվածներից էր 15-րդը: Դա մեջբերենք ամբողջությամբ. «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկելու քայլեր, որպես-

79 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 36-37, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 13-15, «Հայաստանը ...», էջ 502-504:
80 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 37, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 14:

զի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր կերպով ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց»⁸¹: Հոդվածը պարտավորեցնում էր Ռուսաստանի կառավարությանը, որ նա համոզի միջազգային իրավունքով անկախ, սակայն գործնականում Խորհրդային Ռուսաստանին ենթակա Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետություններին՝ Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին, Թուրքիայի հետ կնքելու պայմանագիր, որում **պարտադիր կերպով ճանաչվեն Մոսկվայի պայմանագրի իրենց առնչվող հոդվածները: Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի նպատակն էր՝ կնքված պայմանագիրը ինչ-որ կերպ միջազգային պայմանագրերի չափանիշներին համապատասխանեցնելը, դրան իրավական բնույթ տալը:**

Եվ վերջապես, Մոսկվայի պայմանագրի վերջին՝ 16-րդ հոդվածում, ինչպես սովորաբար ընդունված է, խոսվում էր պայմանագրի հնարավորինս շուտ վավերացման և վավերագրերի՝ Կարսում փոխանակման մասին: Փաստենք, որ պայմանագրի վավերացումը երկու կողմից տեղի է ունեցել 1921 թ. հուլիսին, իսկ վավերագրերի փոխանակումը՝ նույն թվականի սեպտեմբերին⁸²:

Ահա նման տխուր արդյունքով 1921 թ. մարտի 22-ին Հայաստանի 12 հոգուց կազմված պատվիրակությունը, «ցուցաբերելով իսկական պրոլետարական ինտերնացիոնալիզմ», ձեռնունայն վերադարձավ տուն: Հավելենք, որ ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի քարտուղարությունը Հայաստանի վեց պատվիրակներին որպես նվիրատվություն բաժանել էր մեկական ֆրենչի կտոր (օտրեզ), սպիտակեղեն և կոշիկ⁸³: Ահա սա եղավ հայ պատվիրակության միակ «ձեռքբերումը»: Իսկ 1921 թ. մայիսի 19-ին ՀԿԿ ԿԿ-ի պլենումը, լսելով արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի հաղորդումը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին⁸⁴: Խորհրդային-կոմունիստական գաղափարական ու կազմակերպական ամբողջատիրության պայմաններում այլ որոշում չէր էլ կարող լինել:

Անդրադառնալով Մոսկվայի պայմանագրի հանրագումարային արդյունքներին՝ հարց է ծագում, թե որքա՞ն տարածք կորցրեց Հայաստանը, և դրա փոխարեն որքա՞ն ստացան Թուրքիան ու Ադրբեջանը: Հաշվարկները ցույց են տալիս, որ Թուրքիան Հայաստանից ստացել է ավելի մեծ տա-

81 ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 15, «Հայաստանը ...», էջ 504:

82 ՏԵՍ ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 38:

83 ՏԵՍ ՀԱՍ, ֆ. 1, ց. 1, գ. 85, թ. 11:

84 ՏԵՍ ՀԱՍ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 4:

րածք, քան նախատեսված էր նրա «Ազգային ուխտ»-ով: Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիային անցան Կարսի մարզը՝ 17250 քառ. կմ և Սուրմալուի գավառը՝ 3450 քառ. կմ, ընդամենը՝ 20700 քառ. կմ բնիկ հայկական տարածք: Բացի դրանից՝ Թուրքիայի պահանջով Նախիջևանի մարզը՝ շուրջ 5500 քառ. կմ հանձնվեց Ադրբեջանին: Այս համատեքստում, եթե հաշվի առնենք, որ ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական (առանց քվեարկության) որոշմամբ Լեռնային Ղարաբաղը՝ 4160 քառ. կմ, ևս նվիրաբերվեց Ադրբեջանին, ապա 1921 թ. հակահայ այս գործարքներով Հայաստանից ու հայ ժողովրդից խլվեց և Թուրքիային ու Ադրբեջանին միացվեց 20700+ 5500+4160=30360 քառ. կմ տարածք, որն իրականում ավելի մեծ էր, քան Խորհրդային Հայաստանի (ՀՍՄՀ) ու նրա իրավահաջորդ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը՝ 29.8 հազ. քառ. կմ:

Ըստ Մոսկվայի պայմանագրի հողվածների՝ պատկերը հետևյալն է՝

1. 1-ին հողվածով Թուրքիան ստանում էր Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը,

2. 2-րդ հողվածով Վրաստանը Բաթումի մարզից ստանում էր Բաթում քաղաքը՝ նավահանգստով, նավթամուղով և հարակից տարածքներով,

3. 3-րդ հողվածով Ադրբեջանն էլ իր հերթին ստանում էր Նախիջևանի մարզը, մինչդեռ Հայաստանը միայն տարածքներ է կորցրել՝ մնալով ձեռնունայն:

Մոսկվայի պայմանագրի 1-ին և 2-րդ հողվածներով Հայաստանը կորցնում էր ավելի քան 20700 քառ. կմ տարածքով երկու երկրամաս՝ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, իսկ 3-րդ հողվածով՝ Նախիջևանի երկրամասը: Ստացվում է, որ եթե Մոսկվայի պայմանագրով Վրաստանն ու Ադրբեջանը ուրախանալու առիթ ունեցան, ապա Հայաստանն ու հայ ժողովուրդը մինչ օրս շարունակում են ապրել միայն կորստի ու ցավի զգացումով:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտում պարտված և այդ ընթացքում ծանրագույն հանցագործություն՝ Հայոց ցեղասպանությունն իրականացրած Թուրքիան, փոխանակ միջազգային հանրության կողմից պատասխանատվության կանչվեք, ընդհակառակը, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները և կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ ոչ միայն պատիժ չկրեց իր ցեղասպան քաղաքականության համար ու չվերադարձրեց Սևրի պայմանագրով նախատեսված արևմտահայ նահանգները, այլև Մոսկվայի պայմանագրով նույնիսկ որպես պարգև ստացավ արևելահայ տարածքների մի զգալի մասը: Ահա այսպես «լուծվեց» խորհրդային բռնակալներից մեկի՝ Ի. Ստալինի «Պրավդա» թերթում տպագրված հայտնի հողվածի

լայիրշ ու հեզնական արտահայտությամբ՝ «այսպես կոչված հայկական հարցը»⁸⁵:

Վերը շարադրյալից ծագում է մեկ այլ հարց. ինչո՞ւ խորհրդային պետությունը Հայաստանի տարածքների հաշվին նման մեծ զիջումներ կատարեց Թուրքիային: Ամենից առաջ դրա գլխավոր պատճառը, մեր կարծիքով, այն ժամանակվա խորհրդային պետության արևելյան քաղաքականությունն էր, ըստ որի՝ բոլշևիկյան կառավարությունը Թուրքիային համարում էր Արևելքում համաշխարհային հեղափոխության միջնաբերդ, Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժման կազմակերպման ու տարածման կենտրոն: Ուստի համաշխարհային այդ առաքելությունն իրագործելու համար անհրաժեշտ էր խրախուսել, շահագրգռել թուրքերին տարածքային զիջումներով, ոսկով, զենք-զինամթերքով և այլն: Թուրքիային արվող տարածքային զիջումները, ցավոք, կատարվեցին հիմնականում Հայաստանի ու հայ ժողովրդի կենսական շահերի հաշվին, իսկ քեմալականների նպատակը հայկական պետականության խորտակումն էր, նրա տարածքների բզկտումը ու յուրացումը: Ասվածից հետևում է, որ պատմության այդ ճակատագրական փուլում Հայաստանը հայտնվեց բոլշևիկաքեմալական քաղաքականության խաչմերուկում, ուստիև գնաց պարտադրված գոհողությունների ու մեծ կորուստների:

12. Մոսկվայի պայմանագրի վավերականության հարցը և արդիականությունը

Մոսկվայի բանակցությունների և պայմանագրի վերաբերյալ իր ստացած տպավորությունների մասին խոսել և գնահատական է տվել Մոսկվա մեկնած, սակայն խորհրդաժողովին չմասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը: Նա Բաքվում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Միք. Աթաբեկյանին ուղղված մարտի 18-ի նամակում պատմում է Հայաստանի պատվիրակության վիճակի և իրենց անելիքների մասին: Բեկզադյանը փաստում է, որ Հայաստանի պատվիրակության անորոշ կարգավիճակը մի շարք հանգամանքների հետևանք էր. 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում, Կրոնշտադտի նավաստիների ապստամբությունը Ռուսաստանում, ներկուսակցական բանավեճերը, ռազմական կոմունիզմի քաղաքականության հետևանքով խորհրդային երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր դրությունը և այլն⁸⁶: Սակայն Բեկզադյանն այդ աննպաստ հանգամանքներից և ոչ մեկը չի բացարձակացրել և դարձրել հայկական պատվիրակության՝ խորհրդաժողո-

85 «Правда», М. 4 декабря 1920 г.

86 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

վին չմասնակցելու հիմնապատճառ: Ինչպես արդեն ասվել է, Հայաստանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին ի սկզբանե մերժվել էր թուրքերի պահանջով «իրենք Անգորայի կառավարության կողմից լիազորված չեն հայերի հետ բանակցելու»⁸⁷, քանի որ «իրենք ցանկություն չունեն հայերի հետ խոսելու»⁸⁸: Սակայն Ալ. Բեկզադյանը նամակով հայտնում էր, որ Փետրվարյան հեղաշրջումը Երևանում «որոշ անհարմարություններ մտցրեց Հայաստանի պատվիրակության դրության մեջ»⁸⁹:

Ինչպես արդեն ասվել է, ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը նաև որպես Հայաստանի արտգործնախարար, մարտի 12-ին հեռագրել էր Մոսկվա՝ Գ. Չիչերինին հայտարարելով, որ Մոսկվայի բանակցություններին Բեկզադյանի ներկայությունն իրավական ուժ չունի⁹⁰: Բայց այս հեռագիրը ուղարկվել էր այն ժամանակ, երբ հայկական պատվիրակությանն առնվազն 15 օր առաջ՝ փետրվարի 26-ից ի վեր, արգելված է եղել մասնակցել կոնֆերանսին: Բացի դրանից՝ տվյալներ կան, որ մարտի 14-ին ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը ռադիոգրով դարձյալ հայտագիր է հղել Մոսկվա՝ Գ. Չիչերինին, որով բողոքել է Հայաստանի անունից հանդես եկող նախկին արտգործնախարար Բեկզադյանի «ինքնագլուխ ներկայության» դեմ՝ նրա կնքելիք պայմանագրերը համարելով ոչ պարտադիր և իրավական ուժ չունեցող⁹¹:

Ս. Վրացյանը հեռագիրը ուղարկելիս անգամ տեղյակ չի եղել, որ հայկական պատվիրակությանը դրանից կես ամիս առաջ արդեն արգելված էր մասնակցել կոնֆերանսին: Ավելին՝ հայ պատվիրակները և հայազգի պետական գործիչները Մոսկվայի պայմանագրի բովանդակության մասին տեղեկացել են միայն կնքումից հետո, այսինքն՝ «պոստֆակտում»: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը եղել է այնքան դաժան ու աղաղակող, որ Հայաստանի պատվիրակությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունը հայտնելով կատարվածին: Ալ. Բեկզադյանը Մոսկվայից Երևան Հայհեղկոմին հղած ապրիլի 11-ի հեռագրով հայտնում էր. «Մեր պատվիրակությանը կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից զրկելու և Թուրքիայի հետ կնքած պայմանագրում Հայաստանի համար պարունակած ծանր պայմանների կապակցությամբ մենք հայտարարել ենք բողոք, որը, իհարկե, գործնական նշանակություն չի ունեցել»⁹²:

Փաստերը համոզում են, որ ՌՍԳԽՀ կառավարությունը Մոսկվայի բանակցություններով ամենևին էլ ստադիր չէր Հայաստանի տարածքային-

87 «Երկիր», Եր., 16 մարտի 2001 թ.:

88 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

89 Նույն տեղում:

90 Տե՛ս «Փետրվարի 18», Փրակա, 1927, էջ 70-71:

91 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 55:

92 Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր), Եր., 2001, էջ 13:

սահմանային խնդիրներին քիչ թե շատ հայանպաստ լուծում տալու: Խորհրդային Ռուսաստանն առաջին երկիրն էր, որ Մոսկվայի պայմանագրով բացահայտ դուրս եկավ Թուրքիային ուժով պարտադրված, Ալ. Մյանիկյանի բնորոշմամբ՝ «Այդ երկրորդ ասիական Վերսալի՝ Սևրի պայմանագրին»⁹³ դեմ: Դրանով Մոսկվան քաղաքական և դիվանագիտական մեծ աջակցություն ցույց տվեց Անգորային: Մոսկվայի պայմանագրի հայավնաս հետևանքը նաև այն էր, որ այդ պայմանագիրը հեշտացրեց Անտանտի տերությունների գործը Սևրի պայմանագիրը վերանայելու ուղղությամբ:

Հետխորհրդային ռուս հեղինակ Ա. Իգոլկինի գնահատմամբ՝ Մոսկվայի պայմանագիրը վնասել է ոչ միայն հայ ժողովրդի ու Հայաստանի, այլև ռուս ժողովրդի ու Ռուսաստանի պետական շահերը⁹⁴: Մոսկվայի պայմանագրի կնքումը թուրքերի համար ունեցավ ռազմաքաղաքական մեծ նշանակություն. Ռուսաստանի ռազմաֆինանսական հսկայական օգնությամբ ապահովվեց Թուրքիայի թիկունքը Արևելքում և հնարավորություն ընձեռնվեց Արևելյան ճակատում գտնվող Ք. Կարաբեքիրի 40-հազարանոց զորքը տեղափոխելու Արևմտյան ճակատ՝ Էսքիշեհիր, և ապահովելու վերջնական հաղթանակը Հունաստանի, ասել է թե Անտանտի դեմ:

Անդրադառնալով Մոսկվայի պայմանագրի իրավական գնահատականին՝ կարելի է փաստել, որ, իրավունքի տեսանկյունից Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի ու նորմերի կոպիտ խախտումներով: Միջազգայնորեն չճանաչված երկու երկրների՝ Ռուսաստանի և Թուրքիայի կառավարությունները պայմանագիր էին կնքում սահմանների վերաբերյալ՝ չունենալով սահմանային շփման ոչ մի գիծ: Դա դեռ բավական չէ, երկու պետություն՝ Ռուսաստանն ու Թուրքիան, դաշնագիր էին կնքում և որոշում երրորդ պետության, տվյալ դեպքում Հայաստանի սահմանները՝ առանց վերջինիս գիտության ու մասնակցության: Երևանի (Լեգրան-Դրո) 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով խաղաղ ճանապարհով խորհրդայնացած Հայաստանը դիտվում էր որպես անկախ պետություն, մանավանդ, որ նա հանդիսանում էր միջազգայնորեն (դե ֆակտո և դե յուրե) ճանաչված Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը: Հավելենք նաև, որ 1921 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանը տակավին ռազմաքաղաքական դաշինք չէր կնքել Հայաստանի հետ: Ուստի Ռուսաստանը իրավասու չէր պաշտպանելու Հայաստանի շահերը միջազգային խորհրդածողովներում: **Թեև Ռուսաստանի օրինակով Հայաստանում էլ էր հաստատվել կոմունիստական վարչակարգ, սակայն 1921 թ. մարտ ամսվա դրությամբ ՀՍԽՀ պայմանագրային ոչ մի պարտավորությամբ կապված չի եղել Խորհրդային Ռուսաստանին: Եվ**

93 Մյանիկյան Ա., Երկեր, հինգ հատորով, հատ. 5, Եր., 2007, էջ 413:

94 Տե՛ս Иголкин А., Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет, ՊԲՀ, Եր., 2002, N 1, էջ 3-24:

վերջինս չի ունեցել իրավական որևէ հիմք՝ տնօրինելու Հայաստանի տարածքները և որոշելու նրա պետական սահմանները⁹⁵:

Խորհրդային Հայաստանի պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել բանակցություններին այն դեպքում, երբ բարձրացվում էին նրա համար կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային հարցերը: Որքան էլ զավեշտալի է, Հայաստանի պատվիրակությանն անգամ չի թույլատրվել ներկա լինել պայմանագրի ստորագրման արարողությանը, ինչին սովորաբար ներկա են գտնվում անգամ լրագրողներ, հասարակության ներկայացուցիչներ: Ավելին, Հայաստանի պատվիրակությունն անգամ տեղյակ չի եղել, թե երբ է ստորագրվել պայմանագիրը: Կրկին շեշտենք, որ Հայաստանը բնավ չէր լիազորել Ռուսաստանին ռուսաթուրքական բանակցություններին հանդես գալ նաև Հայաստանի (հայ ժողովրդի) անունից և կնքել նրա կենսական շահերին անմիջապես առնչվող պայմանագիր: Ռուսական կողմին տրված նման լիազորագիր գոյություն չունի այն պարզ պատճառով, որ Հայաստանը իր պատվիրակությունն էր գործուղել Մոսկվա՝ ներկայացնելու և պաշտպանելու իր սեփական շահերն ու պահանջները: Այս ամենից նախ կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի համար արժեք չի ունեցել Հայաստանը՝ որպես պետական սուբյեկտ:

Այսպիսով՝ միջազգային իրավունքի տեսակետից Մոսկվայի պայմանագիրը Հայաստանին վերաբերող մասով հակասում է միջազգային պայմանագրային իրավունքի ընդունված հիմնական նորմերին, այն է՝ անտեսված են Հայաստանի՝ որպես պետական սուբյեկտի բանակցություններին մասնակցելու, նրա կամքը ազատ արտահայտելու կամ գոնե նրա կարծիքը հարցնելու պայմանները, որովհետև այդ խորհրդածողովում անմիջականորեն շոշափվում էին Հայաստանի կենսական շահերը:

Միջազգայնագետ Յու. Բարսեղովի կարծիքով՝ Մոսկվայի պայմանագրով խախտված են միջազգային պայմանագրի իրավունքով ընդունված հիմնարար պայմանները. 1) սուբյեկտներին վերաբերող պայմանը, 2) կողմերի ազատ կամարտահայտման պայմանը և 3) օբյեկտի իրավաչափության պայմանը և պայմանագրի նպատակը⁹⁶: Քանզի միջազգային պայմանագրի իրավաբանորեն ուժի մեջ լինելը ենթադրում է հետևյալ պայմանների պարտադիր գոյություն՝ կողմերի առկայությունը, միջազգային իրավասուբյեկտայնությունը, այդ սուբյեկտների իրավաչափ համաձայնությունը, իրավասու օբյեկտը և պայմանագրի նպատակը⁹⁷: Եթե այս պայմաններ

95 Տե՛ս **Саркисян Е.**, «За кулисами...», էջ 81:

96 Տե՛ս Геноцид армян, (документы и комментарии), հատ. 2, մաս 2, էջ 432:

97 Տե՛ս նույն տեղում:

րից որևէ մեկը բացակայում է, ապա պայմանագիրը չի կարող իրավական ուժ ունենալ:

Միջազգային պայմանագրային իրավունքի նորմերից է միջազգային պայմանագիր կնքելու համար այն սուբյեկտների մասնակցությունը, որոնք անմիջականորեն շահագրգռված են պայմանագրով նախատեսված խնդիրների լուծմամբ: Այս տեսակետից Մոսկվայի պայմանագիրը բոլորովին անտեսում էր հայ ժողովրդի օրինական շահերն ու անվիճելի իրավունքները, և դա առաջին հերթին արտահայտվեց առանց Հայաստանի մասնակցության ու համաձայնության պայմանագրի կնքումով: Ավելին, ինչպես արդեն ասվեց, Մոսկվայի պայմանագիրը ստորագրած կողմերը, ըստ էության, միջազգայնորեն ճանաչված չեն եղել: Այդ իմաստով խախտվել են միջազգային իրավունքի հետևյալ անփոփոխ սկզբունքները՝ **«Ոչ ոք չի կարող տալ այն, ինչ չունի»** և **«Ոչ ոք չի կարող տալ ավելի մեծ իրավունք, եթե ինքը դա չունի»**⁹⁸: ՌՄԴԻՇ և ԹԱՄԺ կառավարությունները Մոսկվայի պայմանագրի ստորագրման պահին չեն ճանաչվել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, ուստի և չեն ունեցել միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: Իսկ պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 53-րդ հոդվածում ասված է. «Պայմանագիրն անվավեր է, եթե կնքվելու պահին հակասել է միջազգային հանրային իրավունքի անբեկանելի հիմնադրույթին»⁹⁹:

Մյուս կողմից տարածքների գրավման և յուրացման դեպքում միջազգային պայմանագրերի իրավունքում ընդունված է վաղեմության ժամկետի՝ **Էստոպելի** սկզբունքը (ինստիտուտը): Այդ մասին է վկայում միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 45-րդ հոդվածը: Այնտեղ նշվում է, որ վաղեմության ժամկետի պահանջը գործում է, և տվյալ պայմանագիրը վավերական է այն դեպքում, եթե պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնել է կատարված փաստին¹⁰⁰: Իսկ երբ տուժող կողմն ինչ-որ ձևով արտահայտում է իր դժգոհությունը հայտարարությունների, հայտագրերի, բողոքների և այլնի միջոցով, ապա վաղեմության ժամկետն այլևս չի գործում: Հակառակ դեպքում կնշանակի, որ տուժող կողմը լռելյայն ընդունել է կատարված տարածքային փոփոխությունը: Բայց Հայաստանի պատվիրակությունը Մոսկվայի պայմանագրի բովանդակությանը տեղեկացել է միայն նրա կնքումից հետո, այսինքն՝ կատարվածից հետո՝ **պոստֆակտու**: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասն այնքան դաժան ու աղաղակող էր, որ Հայաստանի ղեկավարությունը ստիպված

98 Геноцид армян, (документы и комментарии), т. 2, ч. 2, с. 433.

99 «Ազգ», Եր., 16 մարտի 2007 թ.:

100 Տե՛ս Ալանյան Ս., Վաղեմության ժամկետի կամ էստոպելի կիրառման անթույլատրելիությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ամենյուրամբ, «Վասն արդարության», 2003, N 47-48, էջ 68:

հանդես է եկել հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունն արտահայտելով պայմանագրին, թեև հանդգլած էր, որ դա գործնական նշանակություն չի ունենա:

Ուստի վաղեմության ժամկետի սկզբունքը կոնկրետացնելով Մոսկվայի պայմանագրի պարագայում՝ տեսնում ենք, որ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Հայաստանի կառավարությունը բողոք է ներկայացրել Ռուսաստանի կառավարությանը, որ նա առանց իր մասնակցության է լուծել Հայաստանի տարածքների հարցը: Մասնավորապես կարելի է հիշատակել Հայաստանի արտգործկոմ, պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի 1921 թ. ապրիլի 15-ի հայտարարությունը՝ ուղղված Ռուսաստանի արտգործոժոկոմ և պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինին: Մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Ա. Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին¹⁰¹:

Իրավագետ Ս. Ավանյանը Հայաստանի կառավարության՝ ժամանակին արված բողոքը ծանրակշիռ փաստարկ է համարում Մոսկվայի, հետևապես և ավելի ուշ կնքված Կարսի պայմանագրերի նկատմամբ վաղեմության ժամկետի սկզբունքը չկիրառելու համար¹⁰²: Նա համոզմունք է հայտնում, որ Էստոպելի սկզբունքը անթույլատրելի է կիրառել Մոսկվայի պայմանագրի առնչությամբ՝ հետևյալ հիմնավորումներով՝ ա) կնքվել է ուժի կիրառմամբ, բ) շահագրգիռ կողմին անտեսելով, գ) հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքին հակասելով, դ) պետությունների ինքնիշխանության և անկախության սկզբունքները ռոտահարելով և այլն¹⁰³:

Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունների միջև կնքված պայմանագրերի օրինականության համար վճռորոշ է միջազգային իրավունքին համապատասխանելը: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ¹⁰⁴:

Ինչպես արդեն ասվել է, չճանաչված էր նաև ԹԱՄԺ կառավարությունը, որը իրավասու չէր պայմանագիր կնքելու Թուրքիայի անունից: Ավելին,

101 ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 4: Ի դեպ, նշենք, որ Մոսկվայի պայմանագրի առնչությամբ բողոք է հայտնել նաև արդեն տապալված Վրաստանի Հանրապետության դեսպանությունը ԱՄՆ-ում: 1921 թ. ապրիլի 12-ին հիշյալ դեսպանությունը նույնպես բողոքել է մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Արդվինը, Արդահանը և Օլթին ռուսական կառավարության կողմից Անգորային տալու վերաբերյալ (տես ԱՄՆ-ի դեսպարտամենտի փաստաթղթերը (1910-1929 թթ.), միկրոֆիլմերի հավաքածու, N 1, ց. 1, գ. 761-767): Գաղտնիք չէ, որ Վրաստանը հավակնում էր Կարսի մարզի առանձին շրջաններին՝ Արդահանին և Օլթին: Դա ակնհայտ դարձավ նաև 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովի ժամանակ:

102 Տես **Ավանյան Ս.**, նշվ. աշխ., էջ 69:

103 Տես նույն տեղում, էջ 69-70:

104 Տես **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), Եր., 2007, էջ 17-18:

ԹԱՄԺ կառավարությունը համարվում էր ապստամբ ու անօրինական, իսկ նրա նախագահ Մ. Քենալ փաշան՝ փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ (թուրքական ռազմական դատարանը 1920 թ. գարնանը նրա նկատմամբ կայացրել էր մահապատժի դատավճիռ): Բայց դա չխանգարեց Ռուսաստանին, հետո նաև Արևմուտքի տերություններին ոչ թե **իրավունքի ուժով, այլ ուժի իրավունքով** համաձայնության գալու և պայմանագրեր կնքելու տակավին չճանաչված այդ կառավարության հետ:

Միանգամայն իրավացի են նրանք, ովքեր Մոսկվայի պայմանագիրը որակում են սոսկ որպես **գործարք**: Ինչպես ամրագրված է պայմանագրային իրավունքի մասին քանիցս նշված Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 34-րդ հոդվածում, «պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար՝ առանց վերջինիս համաձայնության»¹⁰⁵: Այդ իմաստով Մոսկվայի պայմանագիրը ՀՄԽՀ-ին վերաբերող մասով իրոք կարելի է որակել որպես գործարք: Դա գործարք էր երկու առումով՝ ա) Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ կատարեց քեմալականներին, որպեսզի կանխեր նրանց հնարավոր անցումը Անտանտի կողմը և բ) Հայաստանի սահմանների հարցը լուծվեց առանց նրա ներկայացուցչի մասնակցության:

Եվ այդ իմաստով Մոսկվայի պայմանագիրը՝ որպես նախադեպ, նմանություն ու ընդհանրություն ունի 1939 թ. խորհրդային-գերմանական (**Մոլոտով-Ռիբենտրոպ**) գաղտնազերծված պակտի հետ՝ սահմանների մասին իր գաղտնի արձանագրություններով հանդերձ: Սակայն, եթե 1921 թ. պայմանագրով Ռուսաստանը և Թուրքիան (Գ. Չիչերին-Յու. Քենալ) ճշտեցին թուրքանդրկովկասյան սահմանը, ապա Մոլոտով-Ռիբենտրոպ պակտն իր գաղտնի արձանագրությամբ միմյանց միջև ազդեցության ոլորտների բաժանեց Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ: Դա նաև մի գործարք էր, որը արձակեց հիտլերյան Գերմանիայի ձեռքերը՝ սանձազերծելու Երկրորդ աշխարհամարտը:

Այսպիսով, քանի որ միջազգայնորեն չճանաչված ՌՄԴԽՀ և ԹԱՄԺ կառավարությունները պայմանագիր են կնքել միջազգային պայմանագրային իրավունքի կոպիտ խախտումով և որոշել երրորդ պետության՝ Հայաստանի տարածքն ու սահմանները առանց նրա գիտության ու մասնակցության, ուրեմն՝ ի սկզբանե՝ իր ստորագրման պահից մինչ օրս, Մոսկվայի պայմանագիրն անօրինական ու անվավեր է և չի կարող պարտավորություն պարունակել ներկայիս Հայաստանի Հանրապետության համար, առավել ևս որոշել հայ-թուրքական պետական սահմանը: Միջազգային պայմանագրային իրա-

105 Պապյան Ա., նշվ. աշխ., էջ 20:

վունքին չհամապատասխանող այդ փաստաթղթին քիչ թե շատ իրավական բնույթ տալու համար մի քանի ամիս անց իրավիքով է Մոսկվայի խորհրդածողովի շարունակությունն ու վերարտադրությունը հանդիսացող Կարսի խորհրդածողովը արդեն բանակցությունների օրակարգային հարցերի հիմնական կրող Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների մասնակցությամբ, իհարկե՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի հսկողությամբ: Այս մասին հանգամանակի անդրադարձ կլինի «ՎԷՄ» հանդեսի աշնանային համարում, երբ կլրանա Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրի կնքման 100-ամյակը:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայաստանի 20-րդ դարի քաղաքական պատմության առանցքային հիմնահարցերը: Հրատարակել է բազմաթիվ մենագրություններ Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. պատմության, հայ քաղաքական կուսակցությունների, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի, 1937 թվականի քաղաքական բռնաճնշումների վերաբերյալ

Summary

THE MOSCOW TREATY OF MARCH 16 (18), 1921 IN THE FATE OF THE ARMENIAN PEOPLE

Ararat M. Hakobyan
Doctor of Sciences in History

Key words – The 1921 Moscow Treaty, Treaty of Sèvres, V. Lenin, Turkey, Armenia, war, Mustafa Kemal, “National oath”, G. Chicherin, B. Legrand, congress, falsification, 100th anniversary.

The centenary of the signing of the illegal Moscow Russian-Turkish Treaty of “Friendship and Brotherhood” on March 16 (18), 1921 will be marked, which left a heavy trace on the fate of Armenia and the Armenian people. It was signed by Kemalist Turkey and Bolshevik Russia, which at that time were in allied relations. It is a historical fact that the governments of these two internationally unrecognized countries, having virtually no territorial border contact with each other, signed an agreement and resolved the territorial-border issues of the third internationally recognized state, in this case Armenia, without the knowledge and participation of the latter. The Moscow Treaty was signed behind the backs of Armenia and the

Armenian people, with gross violations of international law. And in this sense, the Russian-Turkish Moscow Treaty, as a prototype of a political deal, can be compared and even identified with the Moscow Treaty of 1939 on the division of territories of Eastern Europe – the notorious Soviet-German Molotov-Ribbentrop Pact.

Considering territorial and border issues of vital importance for Armenia and the Armenian people in the sphere of Russian-Turkish relations, it is easy to see that they were openly sacrificed to the expansionist interests of Turkey, which soon became a NATO member.

Summarizing and generalizing the decisions of the parties on territorial and border issues concerning Armenia and the Armenian people, in accordance with the first three articles of the Moscow Treaty, the following real picture can be recorded in the language of numbers. Under this agreement, 17,250 km² of the Kars province and 3450 km² of the Surmalu district, a total of 20,700 km² of the internationally recognized territory of Armenia, were transferred to Turkey. In addition, at the request of Turkey, the Nakhichevan district of the former Erivan Governorate and the internationally recognized Republic of Armenia, which was about 5500 km², was transferred to its younger brother – Azerbaijan. In this context, if we take into account the fact that in 1921, by the decision of the Caucasian Bureau of the Central Committee of the RCWP dated July 5, 1921, 4160 km² of the territory of Nagorno-Karabakh was illegally presented to Azerbaijan, it turns out that in 1921, as a result of these anti-Armenian deals from Armenia and the Armenian people were taken away and annexed to Turkey and Azerbaijan: $20700 + 5500 + 4160 = 30360$ km² of area, which is actually more than the territory of Soviet Armenia and its legal successor, the present Republic of Armenia – 29.8 km². As a result, it turned out that if Georgia and Azerbaijan had reasons for joy, then in Armenia there were still feelings of anxiety, loss and pain, since the more than cynical Article 15 of the Moscow Treaty and its logical continuation in the person of the Kars Treaty of October 13 1921, continue to cause the anger and concern of Armenia and the Armenian people.

These treaties, imposed on Armenia and the Armenian people by force and the threat of the use of force, have been lasting for 100 long and difficult years. We believe that the current government and parliament of Armenia should make a statement on the occasion of this anniversary, addressed primarily to Turkey and Russia, as well as to the UN and the international community as a whole.

Very soon, this fall, the centenary of the Turkish-Transcaucasian Treaty of Kars, which is an exact copy of the Moscow Treaty, will be marked. This will be discussed in detail in the autumn issue of “Vem” magazine.

МОСКОВСКИЙ ДОГОВОР ОТ 16 (18) МАРТА 1921 г. В СУДЬБАХ АРМЯНСКОГО НАРОДА

Арарат М. Акопян

Докт. ист. наук

Ключевые слова - Московский договор 1921 г., Севрский договор, В. Ленин, Турция, Армения, война, Мутафа Кемаль, «Национальный обет», Г. Чичерин, Б. Легран, конгресс, фальсификация, территория, 100-летие, дипломатия, политика, эстония.

Исполняется столетие подписания незаконного Московского русско-турецкого договора о «дружбе и братстве» 16 (18) марта 1921 г., который оставил тяжелый след в судьбах Армении и армянского народа. Его подписали кемалистская Турция и большевистская Россия, которые в то время фактически находились в союзнических отношениях. Исторический факт, что правительства этих двух международно-непризнанных стран, не имея территориально-приграничного контакта друг с другом, подписали договор и решили территориально-пограничные вопросы третьего-международно-признанного государства, в данном случае Армении, без ведома и участия последней. Московский договор был подписан за спиной Армении и армянского народа, с грубыми нарушениями международного права. И в этом смысле Московский русско-турецкий договор, как прообраз политической сделки, можно сравнить и даже отождествить с Московским договором 1939 года о разделе территорий стран Восточной Европы,- советско-германским пактом Молотова-Риббентропа.

Рассматривая территориальные и пограничные вопросы, имеющие жизненно важное значение для Армении и армянского народа в сфере русско-турецких отношений, нетрудно заметить, что они были открыто принесены в жертву экспансионистским интересам кемалистской Турции.

Резюмируя и обобщая решения сторон по территориальным и пограничным вопросам, касающимся Армении и армянского народа, в соответствии с первыми тремя статьями Московского договора, на языке цифр можно зафиксировать следующую реальную картину. По этому договору, 17250 км² провинции Карс и 3450 км² провинции Сурмалу, в общей сложности 20700 км²

перешли Турции. Кроме того, по требованию Турции, Нахичеваньский уезд, который составлял около 5500 км², был передан его младшему брату – Азербайджану. В этом контексте, если принять во внимание тот факт, что в 1921 году по решению Кавказского бюро ЦК РК (б) от 5 июля 1921 г., 4160 км² территории Нагорного Карабаха незаконно был подарен Азербайджану получается, что в 1921 г. в результате этих антиармянских сделок у Армении и армянского народа было отнято и присоединено к Турции и Азербайджану: 20700 + 5500 + 4160 = 30360 км² площади, которая на самом деле больше, чем территория Советской Армении и ее правопреемницы, нынешней Республики Армения - 29,8 км². В результате получилось так, что если у Грузии и Азербайджана были поводы для радости, то в Армении все еще есть чувства беспокойства, утраты и боли, поскольку по 15-я статья Московского договора и ее логическое продолжение в лице Карсского договора от 13 октября 1921 г. продолжают вызывать наибольшую озабоченность Армении и армянского народа.

Эти договоры, навязанные Армении и армянскому народу силой и угрозой применения силы, длятся 100 долгих и трудных лет. Мы считаем, что нынешнее правительство и парламент Армении должны выступить по случаю этой годовщины с заявлением, адресованным в первую очередь Турции и России, а также ООН и международному сообществу в целом.

Совсем скоро, уже этой осенью, исполняется столетие Карсского турецко-кавказского договора, которая является точной копией Московского договора. Об этом будет подробно рассказано в осеннем номере журнала «Вэм».

REFERENCES

1. AMN-I departamenti p'astat'ghat'erè (1910-1929 t't'), mikrofilmeri havak'atsu, N 1, ts'. 1 (In Armenian).
2. Arzumanyan M. V., Daravor goyamart, Yer., 1989 (In Armenian).
3. Artsruni V., Hay-tachkakan paterazmè, Hay spayut'iwne, Shatakh, Yer., 2002 (In Armenian).
4. Aslanyan S., Vaghmut'yan zhamketi kam èstopeli kiraçman ant'uylatreliut'yunè Moskvayi ev Karsi paymanageri arnch'ut'yamb, "Vasn ardarut'yan", 2003, N 47-48 (In Armenian).
5. "Azg", Yer., 16 marti 2007 (In Armenian).
6. "Bor'ba za pobedu Sovetskoj vlasti v Gruzii (dokumenty I materialy. 1917-1921 gg.)", Tbilisi, 1958 (In Russian).
7. "Dokumenty vneshnej politiki SSSR", hat. 2, M., 1958 (In Russian).
8. Galoyan G., Hayastanè ev Mets terut'yunnerè 1917-1923 t't', Yer., 1999 (In Armenian).
9. Genocid armjan (dok. i kom.), hat. 1, M., 2002 (In Russian).
11. Genocid armjan: otvetstvennost' Turcii i ob'jazatel'stva mirovogo soobsh'estva (dokumenty I kommentarii), sost. prof. Barsegov Ju. G., hat. 2, mas 1, M., 2003 (In Russian).
12. HAA (Hayastani azgayin arkhiv).

13. **Hakobyan A.**, Khorhrdayin Hayastanë Moskvayi ev Karsi paymanagerum, Yer., 2010 (**In Armenian**).
14. **Hakobyan A.**, Khorhrdayin Hayastanë Moskvayi ev Karsi paymanagerum, Yer., 2010 (**In Armenian**).
15. **Hakobyan A.**, Miact'yal ev Ankakh Hayastani gaghap'arë Hayotc' patmut'yan holovuyt'um, Yer., 2020 (**In Armenian**).
16. Hay zhoghovrdi patmut'yun, hat. 7, Yer., 1967 (**In Armenian**).
17. Hayastanë mijazgayin divanagitut'yan ev sovetakan artak'in k'aghak'anut'yan p'astat'ght'erum (1828-1923 t't'), khmb. **Kirakosyan J.**, Yer., 1972 (**In Armenian**).
18. Hayastani azgayin atlas, hat. B., Yer., 2008 (**In Armenian**).
19. "Hayastani Hanrapetut'yunë 1918-1920 t't'" (k'aghak'akan patmut'yun), p'astat'ght'eri ev nyut'eri zhoghovatsu, kazmogh **Ghazakhetc'yan VI.** ev urishner, Yer., 2000 (**In Armenian**).
20. Haykakan hamarot hanragitaran, hat. 1, Yer., 1990 (**In Armenian**).
21. **Harut'yunyan B.**, Erku chshgrtum (Nakhijevani himnaharts'ë Moskvayi 1921 t'. marti 16-I rus-t'urk'akan paymanagram (gitazhoghovi nyut'er), Yer., 2001, (**In Armenian**).
22. Hayots' patmut'yun, hat. 4, girk' 1-in, noraguyn shrjan, HH GAA patm. Institute, 2010 (**In Armenian**).
23. **Igolkin A.**, Moskovskij dogovor s Turciej. Vzglyad iz Rossii cherez 77 let, Patma-banasirakan handes, Yer., 2002, N 1 (**In Russian**).
24. "Izvestija", M., 22 marta 1921 g. (**In Russian**).
25. **Kazandzhjan R.**, K voprosu o datirovke Moskovskogo sovetko-tureckogo dogovora 1921 g., "Lraber" has. git. HH GAA, Yer., 1999, N 1 (**In Russian**).
26. **Kemal M.**, Put' novoj Turcii, hat. 3, M., 1943 (**In Russian**).
27. **Khach'atryan K.**, Hay-rusakan haraberut'yunnerë 1920-1922 t't'. Yer., 2007 (**In Armenian**).
28. **Konopka S. R.**, Kavkaz, Tiflis, 1914 (**In Russian**).
29. **Lazean G.**, Hayastan ev Hay datë (hay ew rus yaraberut'iwnneru luyisin tak), Yer., 1991 (**In Armenian**).
31. "Mezhdunarodnaja zhizn'", M., 1963, N 11 (**In Russian**).
32. **Myasnikyan A.**, Erker hing hatorov, hat. 5, Yer., 2007 (**In Armenian**).
33. Nagornnyj Karabax (dok. I kom.), hat. 1, M., 2008 (**In Russian**).
34. Nakhijevani himnaharts'ë Moskvayi 1921 t'. marti 16-i rus-t'urk'akan paymanagram (gitazhoghovi nyut'er), Yer., 2001 (**In Armenian**).
35. **Papyan A.**, Hayots' pahanjatirut'yan iravakan himunk'nerë (hwdvatsneri zhoghovatsu), Yer., 2007 (**In Armenian**).
36. "P'etrvari 18", P'raka, 1927 (**In Armenian**).
37. "Pravda", 4 dekabrja 1920 g. (**In Russian**).
39. **Sahakyan T.**, Ts'avalı paymanager, Yer., 2007 (**In Armenian**).
40. **Sardaryan K.**, Hay vrats'akan haraberut'yunnerë 1918-1921 t't', Yer., 2002 (**In Armenian**).
41. **Sarkisjan E. K.**, Za kulisami kak rozhdalsja Moskovskij dogovor 1921 g., "Literaturnaja Armenija", E., 1991, N 1 (**In Russian**).
42. **Safrastyan R.**, Mustafa K'emal. payk'ar Hayastani Hanrapetut'yan dem, Yer., 2019 (**In Armenian**).
43. Shant'i patvirakut'iwnë, "Hayrenik'", Boston, 1954, N 2 (p'etrvar) (**In Armenian**).

44. **Simonyan Hr.**, Nakhijevani khndirē Moskvayi paymanagram (Nakhijevani himnaharts'ē Moskvayi 1921 t'. marti 16-I rus-t'urk'akan paymanagram, gitazhoghovi nyut'er), Yer., 2001 **(In Armenian)**.
45. **Tērtērean H.**, Hayastani Hanrapetut'iwnē ew Khorhrdayin Rusastani banakts'ut'iwnnerē. L. patvirakut'iwnē, "Hayrenik'", Boston, 1954, N 2, (p'etrvar) **(In Armenian)**.
46. V. I. Lenin I Sovetskaja vneshnjaja politika, M., 1969 **(In Russian)**.
47. **Xejfec A. N.**, Sovetskaja diplomatija I narody Vostoka (1921-1927), M., 1966 **(In Russian)**.
48. "Yerekoyan Yerevan", 9 hunisi, 1988 t'. **(In Armenian)**.
49. "Yerkir", Yer., 16 marti, 2001 t'. **(In Armenian)**.
50. **Zavriev D.**, K Novejshej istorii severo-vostochnyx vilaetov Turcii, Tbilisi, 1947 (In Russian).
51. **Zohrabyan Ē. A.**, Sovetakan Rusastanē ev hay-t'urk'akan haraberut'yunnerē 1920-1922 t't', Yer., 1979 **(In Armenian)**.
52. **Zohrabyan Ē. A.**, Taratsk'ayin-sahmanayin harts'erē rus-t'urk'akan erkrord konferansum (1921 t' p'etrvar-mart), "Lraber" has. git., 1989, N 2 **(In Armenian)**.
53. **Zohrabyan Ē. A.**, 1920 t' t'urk'-haykakan paterazmē ev terut'yunnerē, Yer., 1997 **(In Armenian)**.

Արման Ս. Եղիազարյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՄԱՐԿՏ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱԼԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Մաս Բ: Հայոց թագավորության
մասնատման գործընթացի խորացումը*

Բանալի բառեր – Սմբատ Բ, ավատատիրական մասնատվածություն, թագավորություններ, Բագրատունիներ, Բյուզանդիա, Տայքի կուրապաղատ, ռազմական և տնտեսական հնարավորություններ, միջամտել, ներքին ու արտաքին գործեր, արքունի տիրույթներ:

Մուտք

980-ական թթ. Բագրատունյաց Հայաստանի շրջակա երկրներում կարևոր գործընթացներ էին տեղի ունենում: Էսպես թուլացած Արաբական խալիֆայության միջինարևելյան տիրույթներում տնօրինում էին իրանական ժողովուրդների առաջնորդները, որոնց հաջողվել էր տիրանալ Բաղդադին, նվաճել Միջագետքի ու Ատրիքի մեծ մասը և հարավից ընդհուպ մոտենալ Հայաստանին: Միևնույն ժամանակ իր հզորության գագաթնակետին էր գտնվում Բյուզանդական կայսրությունը, որը, սակայն, այդ շրջանում երբեմն-երբեմն ցնցվում էր գահակալական պայքարից: Կարևոր գործընթացներ էին տեղի ունենում նաև Ատրպատականում, որտեղ աստիճանաբար տիրապետող դիրքերի էին հասնում Թավրիզի տիրակալ Ռավվադյանները:

Նախկինից լիովին տարբերվող իրավիճակ էր նաև քրիստոնյա Այսրկովկասում, որտեղ հայտնվել էին նոր դերակատարներ՝ աբխազական թագավոր Բագրատ Գ-ն (978-1014 թթ.) և Տայքի կուրապաղատ Դավիթը (961-1000 թթ.), ում Բյուզանդիան խնդրո առարկա ժամանակաշրջանում ծավալուն տիրույթներ նվիրեց Հայաստանի արևմտյան և կենտրոնական հատվածներում, որով նրա հզորությունը մեծապես աճեց՝ հնարավորու-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 19.02.2021: